ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2015
02.2015
03.2015
04.2015
05.2015
Մայիս
06.2015
07.2015
08.2015
09.2015
10.2015
11.2015
12.2015

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 22-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2015

Մայիս

թիվ 5 (201)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ին «էֆ5» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրելու, վերաֆինանսավորման տոկոսադրույքը անփոփոխ թողնելու, ինչպես նաև «ԻԴՐԱՄ» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող ՍՊԸ-ի, «Թել-Սել» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող ՓԲԸ-ի որոշ մասնաճյուղեր հաշվառելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի «Տերյան» մասնաճյուղը գրանցելու, «Արցախբանկ» ՓԲԸ-ի «Սայաթ - Նովա» մասնաճյուղի գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 6 գրավատների նկատմամբ տուգանք կիրառելու և 1 արտարժույթի փոխանակման կետի, 1 ԱՍՊԸ-ի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 107-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 285-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 108-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին»

12 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 109-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի թիվ 93-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

20 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 110-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

23 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 111-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի ապրիլի 7-ի թիվ 83-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

24 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 112-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 357-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

43 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 113-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 356-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

48 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 114-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

56 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***«էֆ5» («F5») արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 101Ա):
- ***Անփոփոխ է թողնվել*** վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 10.5% (որոշում թիվ 116Ա):
- ***Հաշվառվել են*** «ԻԴՐԱՄ» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող սահմանափակ պատասխանատվությամբ և «Թել-Սել» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «էրեբունի», «Ամիրյան» և «Թել-Սել Արտաշատ» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 117Ա, 120Ա):
- ***Գրանցվել է*** «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» փակ բաժնետիրական ընկերության «Տերյան» մասնաճյուղը (որոշում թիվ 1/375Ա):
- ***Գրանցվել է*** «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Սայաթ-Նովա» մասնաճյուղի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/415Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 6 գրավատների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 975000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/350Ա, 1/368Ա-1/370Ա, 1/412Ա, 1/413Ա) և 1 արտարժույթի փոխանակման կետի, 1 ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/385Ա, 1/386Ա):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 285-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բարելավել վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների գրանցման, ղեկավարների կազմում փոփոխությունների իրականացման և ղեկավարներին որակավորման վկայականների տրամադրման գործընթացները,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի «Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01-ը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 240-Ն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 241-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 285-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 17/01) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) 80-րդ կետի 2-րդ ենթակետում «վերաբերյալ» բառից հետո լրացնել «ինչպես նաև ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու վերաբերյալ (առկայության դեպքում)» բառերը,

2) 95-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Վճարահաշվարկային կազմակերպությունը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել սույն կանոնակարգի 94-րդ կետում նշված պատվիրակման պայմանագրի և պատվիրակման ծառայություններ մատուցող կազմակերպությունում վճարահաշվարկային կազմակերպության հաշվապահական հաշվառումը վարողի համապատասխան որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի պատճենը, ինչպես նաև տվյալ փաստաթղթերում տեղի ունեցած փոփոխությունները՝ համապատասխան փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում:»,

3) 113-րդ կետում «բանկում:» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Ընդ որում, Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավար պաշտոնների թեկնածուները Կենտրոնական բանկում նախատեսված քննություններին կարող են մասնակցել միայն այն Վճարահաշվարկային կազմակերպության միջնորդությամբ (Հավելված 5 ՀՀ 1-ին համապատասխան), որում նախատեսում են զբաղեցնել տվյալ որակավորմանը համապատասխան պաշտոն:»,

4) Կանոնակարգ 17/01-ի 115-րդ կետում՝

ա. 2-րդ ենթակետի «վկայական/ները» բառից հետո հանել «վճարահաշվարկային կազմակերպության գործադիր տնօրենի, գործադիր տնօրենի տեղակալի պաշտոններում գրանցվելու համար» բառերը,

բ. հանել 3-րդ ենթակետը,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. մայիսի 5-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 29.05.2015 թ. (ՀՀՊՏ N15 (527)[1], 8.06.2015):

5) 118-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«118. Սույն կանոնակարգով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից տրամադրված համապատասխան որակավորումը ստացած են համարվում սույն կանոնակարգի Հավելված 3.1-ով սահմանված միջազգային հեղինակավոր կազմակերպություններում վերջին 10 տարվա ընթացքում առնվազն 1 տարի աշխատած և գրանցման գործընթացում գտնվող այն ղեկավարների թեկնածուները, ովքեր դրանցում ստանձնել են որակավորման ենթակա պաշտոնին համանման պաշտոնի պարտականություններ և/կամ զբաղեցրել նմանատիպ պաշտոններ:»,

6) 122-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

7) Կանոնակարգ 17/01-ում լրացնել հետևյալ բովանդակությամբ «122.1» կետ.

«122.1. Վճարահաշվարկային կազմակերպության կողմից սույն կանոնակարգի 113-րդ կետում նշված ղեկավարի գրանցման միջնորդագիրը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո ղեկավարի թեկնածուն 15-օրյա ժամկետում անցնում է որակավորման ստուգում, ընդ որում՝ Կենտրոնական բանկը նախապես թեկնածուին տեղեկացնում է քննության ստույգ օրվա մասին:»,

8) Կանոնակարգ 17/01-ի 123-րդ կետը ուժը կորցրած ճանաչել,

9) 124-րդ կետում «տեղեկանքը» բառից հետո լրացնել «(ոչ ռեզիդենտները ներկայացնում են առկայության դեպքում):»,

10) 141-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«141. Բացասական արդյունք ապահոված թեկնածուները կրկին կարող են մասնակցել քննությանը՝ սույն կանոնակարգի 122.1-րդ կետով սահմանված ժամկետում:»,

11) 142-րդ կետում՝

ա. «5» թիվը փոխարինել «3» թվով,

բ. «15» թիվը փոխարինել «5» թվով,

12) 143-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«143. Սույն կանոնակարգի Հավելված 10-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է քննության դրական արդյունք ապահոված թեկնածուներին՝ էլեկտրոնային եղանակով, ուղարկվելով այն ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում լրացված էլեկտրոնային փոստի հասցեին՝ ղեկավարին Կենտրոնական բանկում գրանցելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:»,

13) 144-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«144. Սույն կանոնակարգի Հավելված 10.1-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 116-րդ կամ 118-րդ կետերի պահանջները բավարարող ղեկավարի թեկնածուին՝ ուղարկվելով այն ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում լրացված էլեկտրոնային փոստի հասցեին՝ ղեկավարին Կենտրոնական բանկում գրանցելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:»,

14) 146-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«146. Որակավորման վկայականները տրվում են դրանց ստորագրման պահից հաշված 5 (հինգ) տարի ժամկետով, բացառությամբ սույն կանոնակարգի 116-րդ կետով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են մինչև որակավորման վկայականի տրման հիմք հանդիսացող որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը կամ տվյալ որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի՝ որակավորման վկայականի տրամադրման հիմք հանդիսանալու ավարտը կամ անձի կողմից այնպիսի գործողության կամ անգործության կատարումը, որի հետևանքով խախտվել են որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի տրամադրման և (կամ) պահպանման կանոնները, և սույն կանոնակարգի 118-րդ կետով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են անժամկետ:»,

15) 147-րդ կետը ուժը կորցրած ճանաչել,

16) Կանոնակարգ 17/01-ում լրացնել հետևյալ բովանդակությամբ «148.1» կետ.

«148.1. Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցած և գրանցված ղեկավարի որակավորման վկայականի ժամկետը լրանալուց առնվազն 15 օր առաջ Վճարահաշվարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է դիմում ղեկավարի համար որակավորման ստուգման քննություն անցկացնելու միջնորդությամբ: Որակավորման ստուգում անցած ղեկավարին տրամադրվում է նոր որակավորման վկայական՝ քննությունը հանձնելուց հետո 10-օրյա ժամկետում՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով:»,

17) Կանոնակարգ 17/01-ում լրացնել հետևյալ բովանդակությամբ «148.2» կետ.

«148.2. Կենտրոնական բանկում գրանցված ղեկավարի, ով ստացել է սույն կանոնակարգի 116-րդ կետով սահմանված ղեկավարի՝ իր պաշտոնին համապատասխան որակավորում, նախկինում ստաց-

ված որակավորման վկայականի ժամկետը լրանալուց առնվազն 5 օր առաջ Վճարահաշվարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում որակավորման վկայականի ստացման համար դիմում՝ կցելով ղեկավարի որակավորումը հավաստող փաստաթուղթը: Կենտրոնական բանկը որակավորումը հավաստող փաստաթղթի հիման վրա ղեկավարին տրամադրում է նոր որակավորման վկայական՝ դիմումը ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով:»,

18) 150-րդ կետում հանել «գլխավոր հաշվապահի տեղակալի» բառերը,

19) Կանոնակարգ 17/01-ում լրացնել հետևյալ բովանդակությամբ 150.1-րդ կետ.

«150.1. Անձը կարող է գրանցվել Վճարահաշվարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի պաշտոնում ՀՀ կենտրոնական բանկում բանկի ու օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի որակավորման քննության դրական արդյունք ապահովելու պարագայում: Տվյալ դեպքում տրամադրվում է սույն կանոնակարգի Հավելված 10-ով սահմանված որակավորման վկայականը՝ էլեկտրոնային եղանակով, ուղարկվելով այն ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում լրացված էլեկտրոնային փոստի հասցեին՝ ղեկավարին կենտրոնական բանկում գրանցելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:»,

20) Հանել 192-րդ կետի վերջին նախադասությունը,

21) Հավելված 5-ի Ձև 1-ում հանել «(խորհրդի անդամի համար՝ նաև ստուգել մասնագիտական համապատասխանությունը)» բառերը,

22) Հավելված 10-ի վերնագրից հանել «(ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ, ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ)» բառերը,

23) Հավելված 10.1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
8 մայիսի 2015 թ., N 107-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի մայիսի 5-ի թիվ 107-Ն որոշմամբ

«Հավելված 10.1
«Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը,
վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը,
վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող
պահանջները» կանոնակարգ 17/01-ի»

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն N

Սույն վկայականը տրվում է

_____ -ին _____
Անուն, ազգանուն *(հանրային ծառայությունների համարանիշ, իսկ բացակայության դեպքում՝ ածնագրի տվյալներ)*

Վճարահաշվարկային կազմակերպության՝

□ դրամական (փողային) փոխանցում իրականացնող
□ վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսին և քլիրինգ իրականացնող

_____
(պաշտոնի կամ պաշտոնների անվանումը)

պաշտոնում (պաշտոններում) աշխատելու համար:

Վկայականի տրման հիմք է հանդիսանում _____
(որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը)

Սույն վկայականն ուժի մեջ է մինչև որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը:

ՀՀ կենտրոնական
բանկի նախագահ՝ _____

«__»_____ 20__ թ.:

ԴԱՐՁԵՐԵՍ

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե վերջինիս տրման համար հիմք հանդիսացող որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը կորցնում է վավերականությունը:

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե անձը կատարել է այնպիսի գործողություն կամ թույլ է տվել այնպիսի անգործություն, որի հետևանքով խախտել է որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի տրամադրման և (կամ) պահպանման կանոնները:

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե համապատասխան փոփոխությունների արդյունքում տվյալ որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը այլևս վկայագրի տրման հիմք չէ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բարձրացնել ապահովագրական գործակալների կողմից մատուցվող ծառայությունների որակը,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը, 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 40-րդ հոդվածի 6-րդ մասը, 51-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, 90-րդ հոդվածի 4-րդ մասը, 103-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ը հաստատելու մասին» թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3/01) կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) Կանոնակարգ 3/01-ի Հավելված 32-ում «օրենքի 7-րդ հոդվածի» բառերից հետո լրացնել «, ընդ որում, եթե գործակալն իրականացնում է Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գծով միջնորդություն, ապա օրենքի 7-րդ հոդվածի համապատասխան դասից հետո փակագծերում նշվում է «ԱՊՊԱ» բառը)»,
2) Կանոնակարգ 3/01-ի Հավելված 12-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում ապահովագրական ընկերությունները պարտավոր են՝

1) ապահովել, որ իրենց՝ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գծով միջնորդություն իրականացնող ապահովագրական գործակալներն ունենան Ավտոապահովագրության միասնական պատուհան (այսուհետ՝ ԱԱՄՊ) համակարգով աշխատելու հավաստագիր,
2) ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գծով միջնորդություն իրականացնող ԱԱՄՊ համակարգով աշխատելու հավաստագիր ունեցող գործակալների հաշվառման վկայականներում կատարել համապատասխան նշում՝ համաձայն Կանոնակարգ 3/01-ի Հավելված 32-ի,
3) իրենց ինտերնետային կայքերում հրապարակել ԱԱՄՊ համակարգով աշխատելու հավաստագիր ունեցող ապահովագրական գործակալների ցանկը՝ հատուկ նշում կատարելով հավաստագիր ունենալու մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
8 մայիսի 2015 թ., N 108-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. մայիսի 5-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 29.05.2015 թ. (ՀՀԳՏ N15 (527)[1], 8.06.2015):

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի մայիսի 5-ի թիվ 109-Ն որոշմամբ

Հավելված 12
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

ՏԵՂԵԿԱՆՔ
Ապահովագրական գործակալների վերաբերյալ

Ամրակցեք այստեղ ֆիզիկական անձ գործակալի լուսանկարը:
☐ Այս վանդակում նշում է կատարվում, եթե ներկայացվում են միայն փոփոխությունները:
1. Ապահովագրական գործակալների ռեգիստրում անձին հաշվառելու համար միջնորդագիր ներկայացնող ապահովագրական ընկերության անվանումը
2. Ապահովագրական գործակալի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը կամ անուն, հայրանուն, ազգանունը o Իրավաբանական անձ գործակալի համար. Անվանումը՝ Կազմակերպաիրավական ձևը՝ Ֆիզիկական անձ. o Անհատ ձեռնարկատեր Ֆիզիկական անձ (անուն, ազգանուն, հայրանուն) o Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող Ֆիզիկական անձ (անուն, ազգանուն, հայրանուն)
3. Ապահովագրական գործակալի վերաբերյալ տվյալներ
3.1. Իրավաբանական անձ գործակալի համար Հարկ Վճարողի Հաշվառման Համարը՝ Պետական գրանցման համարը՝ Անհատ ձեռնարկատեր և ֆիզիկական անձ գործակալի համար՝ Հանրային ծառայությունների համարանիշը՝ *կամ* Հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը՝ Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ ապահովագրական գործակալի համար՝ Անձնագրի տվյալներ՝
3.2. Իրավաբանական անձ գործակալի համար o Գործունեության տեսակը՝ _____ o Այլ գործունեությամբ չի զբաղվում՝ Գործունեության իրականացման վայրը՝ Հեռախոսահամար՝ Անհատ ձեռնարկատեր և ֆիզիկական անձ ապահովագրական գործակալի համար՝ o Գործունեության տեսակը՝ _____ o Այլ գործունեությամբ չի զբաղվում՝ Հաշվառման վայր՝ Գործունեության իրականացման վայր՝ Հեռախոսահամար՝

3.3. Իրավաբանական անձ գործակալի ղեկավար անձանց ցանկը

3.4. Իրավաբանական անձի ապահովագրական գործակալի գործառույթներ իրականացնող ֆիզիկական անձ աշխատակիցների ցանկը

3.5. Իրավաբանական անձ գործակալի մասնաճյուղերի և (կամ) ներկայացուցչությունների ցանկը: *Սույն կետը լրացվում է, եթե իրավաբանական անձ գործակալը մտադիր է իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ մասնաճյուղերի և ներկայացուցչությունների միջոցով: Վերջիններիս բացակայության դեպքում կատարվում է «չունի մասնաճյուղեր և (կամ) ներկայացուցչություններ» նշումը:*

4. Արդյո՞ք ապահովագրական ընկերությունը (որի հետ աշխատելու է գործակալը) ստանձնել է ապահովագրական գործակալի մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու պատասխանատվությունը:

- o Ոչ,
- o Այո, նշել պատասխանատվության չափը:

5. Արդյո՞ք ապահովագրական ընկերությունը հավաստում է, որ ապահովագրական գործակալի գործառույթներ իրականացնող ֆիզիկական անձինք տիրապետում են սույն կանոնակարգի Հավելված 37-ով սահմանված թեմաներին՝ ըստ սահմանված խորության:

- o Ոչ,
- o Այո:

5.1. Արդյո՞ք ապահովագրական ընկերությունը հավաստում է, որ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության գծով ապահովագրական գործակալի գործառույթներ իրականացնող ֆիզիկական անձինք ունեն Ավտոապահովագրության միասնական պատուհան համակարգով աշխատելու հավաստագիր:

- o Ոչ,
- o Այո:

6. Արդյո՞ք առկա է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերով սահմանված հիմքերի բացակայության մասին հայտարարություն:

- o Ոչ,
- o Այո:

7. Կից ներկայացնում ենք ապահովագրական գործակալի հետ կնքած պայմանագրի պատճենը (..էջ):

Ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական գործակալի մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու պատասխանատվությունը չստանձնելու դեպքում կից ներկայացնում ենք մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու համար գործակալի կնքած պատասխանատվության ապահովագրության պայմանագրի պատճենը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի թիվ 93-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հավաքագրել վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող սվոփ գործարքների վերաբերյալ համապատասխան տեղեկությունները, հստակեցնել վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների լրացման կարգը, սահմանել լողացող տոկոսադրույքով պարտքային արժեթղթերով կնքված գործարքների վերաբերյալ հաշվետվությունների լրացման առանձնահատկությունները,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իա» կետերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի ««Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ը հաստատելու մասին» թիվ 93-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 15) կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) Կանոնակարգ 15-ի 4-րդ կետում «միջոցով» բառից հետո լրացնել «(Կենտրոնական բանկի կողմից տրամադրված հասցեով)» բառերը:

2) Կանոնակարգ 15-ի 20.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«20.2. Սույն կանոնակարգի 2-րդ և 3-րդ կետերում ընդգրկված աղյուսակներում նշված թիվ 32 հաշվետվությունը բաղկացած է 5 աղյուսակից, որոնք լրացվում են սույն կետով սահմանված կարգով: Հաշվետու վարկային կազմակերպությունները սույն կետով նախատեսված հաշվետվությունը չեն ներկայացնում ոչ օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձանց միջոցով կնքված գործարքների և մարման գործարքների համար:

Թիվ 32 հաշվետվության 3-րդ, 4-րդ և 5-րդ աղյուսակները լրացնում են սվոփ գործարքներ իրականացնող վարկային կազմակերպությունները:

1) Սույն կետով նախատեսված հաշվետվությունում լրացվում են հաշվետվության ներկայացման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ից մինչև հաշվետվության ներկայացման օրվա ժամը 16:00-ն (հաշվետու օր) կնքված գործարքների և (կամ) արդեն կնքված գործարքների պայմաններում փոփոխությունների (այսուհետ՝ փոփոխված գործարքներ) վերաբերյալ տեղեկությունները (անկախ տվյալ գործարքի մարման ժամկետից): Ընդ որում, եթե հաշվետվությունում ներառվող տեղեկություններում նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ որևէ փոփոխություն տեղի չի ունեցել, ապա հաշվետվությունը ներկայացվում է միայն նշելով վարկային կազմակերպության անվանումը և հաշվետվության ներկայացման ամսաթիվը՝ առանց լրացնելու համապատասխան աղյուսակի համապատասխան սյունակները:

2) Սույն հաշվետվության իմաստով գործարքների պայմաններում փոփոխություններ են համարվում սույն հաշվետվության 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ աղյուսակներում տվյալ գործարքի վերաբերյալ նախկինում ներկայացված տեղեկությունների փոփոխությունները: Փոփոխված գործարքների վերաբերյալ տեղեկությունները լրացնելիս սույն հաշվետվության աղյուսակներում լրացվում են ինչպես բոլոր փոփոխված տեղեկությունները (բացառությամբ «Գործարքի կնքման ամսաթիվը» և «Գործարքի նույնականացուցիչ համարը» սյունակների, որտեղ լրացվում են առաջնային գործարքի համապատասխանաբար «Գործարքի կնքման ամսաթիվը» և «Գործարքի նույնականացուցիչ համարը»), այնպես էլ այն տեղեկությունները, որոնք չեն փոփոխվել:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. մայիսի 5-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.05.2015 թ. (ՀՀԳՏ N13 (525)[1], 22.05.2015):

3) Սույն հաշվետվությունում գործարքները լրացվում են այն արժույթով, որով կնքվել են գործարքները, իսկ թվերը ներկայացվում են ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ:
4) Սույն կետով նախատեսված հաշվետվության աղյուսակների սյունակները լրացվում են հետևյալ ընդհանուր կանոններին համապատասխան.

ա. ***«Արժեթղթի դասը»*** սյունակում նշվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»: Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի (թողարկման պետական գրանցման համարի) առկայության դեպքում սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում: Սույն ենթակետով նախատեսված սյունակն օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:

բ. ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):

գ. ***«Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը»*** սյունակը լրացվում է արժեթղթի տարբերակիչ ծածկագրի բացակայության դեպքում: Սյունակում նշվում են թողարկողի ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը), գտնվելու վայրը (մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն): Սույն ենթակետով նախատեսված սյունակն օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:

դ. ***«Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով»*** սյունակում լրացվում է միայն արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը:

ե. ***«Գործարքի արժույթի ISO կոդը»*** սյունակում լրացվում է գործարքով վճարման միջոց հանդիսացող արժույթի կոդը:

զ. ***«Արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը»*** ոչ ծավալային ֆիքսված տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում սույն սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային արժեթղթերի դեպքում՝ գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով (մեթոդաբանությամբ): Ոչ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում սույն սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում՝ գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված ընթացիկ արժեկտրոնի զեղչման դրույքը (ընթացիկ արժեկտրոնը (առաջիկա վճարվելիք արժեկտրոնը) զեղչելու համար օգտագործվող շուկայական տոկոսադրույքը)՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով: Սույն սյունակը չի լրացվում այն արժեթղթերի համար, որոնց համար նախատեսված չէ եկամտաբերության հաշվարկ (օրինակ՝ հասարակ բաժնետոմսերի, բաժնեմասերի, ներդրումային ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) կամ դրանցում մասնակիցների բաժնեմասը հավաստող նման այլ փաստաթղթերի համար և այլն): Ընդ որում՝ արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը հաշվարկվում է գործարքի կատարման (վերջնահաշվարկի) օրվա դրությամբ:

է. ***«Գործարքի կնքման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է առաջնային գործարքի կնքման ամսաթիվը:

ը. ***«Գործարքի մյուս կողմը»*** սյունակում լրացվում է գործարքի մյուս կողմ հանդիսացող սուբյեկտին Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, դրա բացակայության դեպքում նշվում է այդ կողմի ռեզիդենտությունը՝ կատարելով «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ» նշումը: Ընդ որում, եթե գործարքի մյուս կողմ հանդիսացող ներդրումային ծառայություններ մատուցող անձը գործարքը կնքել է հաճախորդի հաշվին, ապա գործարքի մյուս կողմ է համարվում ոչ թե տվյալ հաճախորդը, այլ այդ հաճախորդի հաշվին գործարք կնքող ներդրումային ծառայություններ մատուցող անձը:

թ. ***«Միջնորդը»*** սյունակը լրացման ենթակա է միայն օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջոցով օտարերկրյա կազմակերպված շուկայում կամ օտարերկրյա անձի հետ գործարքներ կնքելու դեպքում, որտեղ լրացվում է միջնորդ հանդիսացող ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը:

5) Ի լրումն սույն կետով սահմանված լրացման կանոնների՝ սույն կետով նախատեսված հաշվետվության յուրաքանչյուր աղյուսակի համար նախատեսվում են լրացման լրացուցիչ կանոններ:

6) ***«Հաշվետու անձի կողմից կնքված արժեթղթերի առքուվաճառքի գործարքների վերաբերյալ»*** 1-ին աղյուսակում լրացվում են հաշվետու անձանց կողմից արժեթղթերի առքի ու վաճառքի գործարքների կնքման վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն լրացման հետևյալ կանոնների.

ա. ***«Գործարքի տեսակը (առք/վաճառք)»*** սյունակում լրացվում է «առք» կամ «վաճառք»՝ կախված հաշվետու անձի տեսանկյունից գործարքն առք է, թե՝ վաճառք:

բ. ***«Քանակը»*** սյունակում լրացվում է գնվող կամ վաճառվող արժեթղթերի քանակը՝ հատերով, ընդ որում՝ ծավալային արժեթղթերի համար սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում:

գ. ***«Միավոր արժեթղթի գինը»*** սյունակում լրացվում է մեկ արժեթղթի առքի (վաճառքի) գինը: Ծավալային արժեթղթերի համար սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում:

դ. ***«Ընդհանուր գումարը»*** հաշվարկվում է որպես միավոր գնի և քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ծավալային արժեթղթերով կնքված գործարքի ընդհանուր գինը:

ե. ***«Գործարքի կատարման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է արժեթղթերի առուվաճառքի գործարքի վերջնահաշվարկի ամսաթիվը (օրինակ՝ 01/01/2015):

7) ***«Հաշվետու անձի կողմից կնքված ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների վերաբերյալ»*** 2-րդ աղյուսակում լրացվում են հաշվետու անձի կողմից կնքված և (կամ) փոփոխված ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն լրացման հետևյալ կանոնների.

ա. **«Գործարքի նույնականացուցիչ համարը»** սյունակում նշվում է հաշվետու անձի կողմից վարվող գործարքների ներքին գրանցամատյաններում տվյալ գործարքին տրված նույնականացուցիչ համարը, որը պետք է լինի առանձնահատուկ (չկրկնվող) յուրաքանչյուր գործարքի համար:

բ. ***«Գործարքի տեսակը (ռեպո/հակադարձ ռեպո)»*** սյունակում նշվում է՝ հաշվետու անձի տեսանկյունից գործարքը ռեպո է, թե հակադարձ ռեպո: Արժեթղթերի վաճառքի գործարքը՝ հետգնման պայմանով, ներկայացվում է որպես «ռեպո» գործարք, իսկ արժեթղթերի առքի գործարքը՝ հետ վաճառելու պայմանով, լրացվում է որպես «հակադարձ ռեպո» գործարք:

գ. ***«Գործարքի բնույթը»*** սյունակում նշվում է «նոր կնքված», «երկարաձգված», «կրճատված» կամ «այլ» տարբերակներից մեկը: Ընդ որում, նոր գործարք կնքվելու դեպքում նշվում է «նոր կնքված» տարբերակը, արդեն կնքված գործարքների գործողության ժամկետի կրճատման դեպքում (անկախ այն հանգամանքից այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ «կրճատված» տարբերակը, երկարաձգման դեպքում (անկախ այն հանգամանքից այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ «երկարաձգված» տարբերակը, իսկ արդեն կնքված գործարքների այլ պայմանների փոփոխության դեպքում, որոնց դեպքում գործարքի գործողության ժամկետի փոփոխություն տեղի չի ունեցել, նշվում է «այլ» տարբերակը:

դ. ***«Քանակը»*** սյունակում լրացվում է ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի հիմքում ընկած արժեթղթի քանակը: Ընդ որում՝ ծավալային արժեթղթերով ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների կնքման դեպքում սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում:

ե. ***«Ընդհանուր գումարը»*** սյունակում լրացվում է ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի առաջնային առքի (վաճառքի) ընդհանուր արժեքը:

զ. ***«Տարեկան ռեպո (հակադարձ ռեպո) տոկոսադրույքը»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի տարեկան (տարին՝ 365 կամ 366 օր) տոկոսադրույքը: Այն դեպքում, երբ տոկոսադրույք վճարողը արժեթղթերի գնորդն է, տոկոսադրույքը լրացվում է բացասական նշանով:

է. ***«Փոփոխված գործարքի ամսաթիվը»*** սյունակը լրացվում է միայն փոփոխված գործարքների լրացման դեպքում, որտեղ լրացվում է նախկինում կնքված գործարքի պայմաններում փոփոխություն իրականացնելու մասին ցանկացած ձևով համաձայնություն ձեռք բերելու ամսաթիվը՝ անկախ այդ համաձայնության ուժի մեջ մտնելու ժամկետից:

ը. ***«Գործարքի կատարման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է ռեպո/հակադարձ ռեպո գործարքի (առաջնային առքի/վաճառքի) վերջնահաշվարկի ամսաթիվը (օրինակ՝ 01/01/2015):

թ. ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):

ժ. ***«Ռեպո/հակադարձ ռեպո գործարքի մարման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է ռեպո/հակադարձ ռեպո գործարքի մարման վերջնաժամկետը (օրինակ՝ 01/01/2015):

Սույն աղյուսակում անհրաժեշտ է լրացնել բոլոր ռեպո/հակադարձ ռեպո գործարքները (այդ թվում՝ լոմբարդային ռեպո գործարքները), բացառությամբ միջօրյա ռեպո գործարքների: Այն դեպքում, երբ միջօրյա ռեպո գործարքը վերածնակերպվում է լոմբարդային ռեպո գործարքի, ապա այդ գործարքն անհրաժեշտ է ներառել սույն աղյուսակում, ընդ որում՝ այս դեպքում տվյալ գործարքը ներառում է հաջորդ օրվա հաշվետվության մեջ: Այն դեպքերում, երբ կնքված ռեպո/հակադարձ ռեպո գործարքների հաշվետվության մեջ ներառման ենթակա տվյալները հայտնի չեն մինչև գործարքի կնքման օրվա ժամը 16:30-ը, ապա նշված գործարքների վերաբերյալ տեղեկությունները ներառվում են հաջորդ հաշվետու օրվա հաշվետվության մեջ:

7.1) Այն դեպքում, երբ ռեպո/հակադարձ ռեպո գործարքի հիմքում ընկած են մի քանի տեսակի արժեթղթեր (մեկից ավելի ծածկագիր ունեցող արժեթղթեր), այդ գործարքները յուրաքանչյուր ծածկագրով արժեթղթի համար լրացվում են առանձին տողով: Ընդ որում՝ «Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով», «Քանակը» և «Ընդհանուր գումարը» սյուներում լրացվում են յուրաքանչյուր ծածկագրով արժեթղթի համապատասխանաբար ընդհանուր անվանական արժեքը, քանակը (առկայության դեպքում) և յուրաքանչյուր արժեթղթի դիմաց ստացվող/տրամադրվող դրամական միջոցների ընդհանուր արժեքը:

8) ***«Փոխարժեքային սվոփ գործարքների կնքման վերաբերյալ»*** 3-րդ աղյուսակում լրացվում են հաշվետու օրվա ընթացքում հաշվետու վարկային կազմակերպության կողմից կնքված փոխարժեքային սվոփ գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

9) ***«Արժութային սվոփ գործարքների կնքման վերաբերյալ»*** 4-րդ աղյուսակում լրացվում են հաշվետու օրվա ընթացքում հաշվետու վարկային կազմակերպության կողմից կնքված արժութային սվոփ գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

10) ***«Տոկոսադրույքային սվոփ գործարքների կնքման վերաբերյալ»*** 5-րդ աղյուսակում լրացվում են հաշվետու օրվա ընթացքում հաշվետու վարկային կազմակերպության կողմից կնքված տոկոսադրույքային սվոփ գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

11) Սույն հաշվետվության իմաստով՝ 3-րդ, 4-րդ և 5-րդ աղյուսակներում ֆորվարդի հիմքում ընկած արժույթն անհրաժեշտ է որոշել հետևյալ սկզբունքով.

ա. եթե ֆորվարդով փոխանակվող արժույթներից մեկը Հայաստանի Հանրապետության դրամ է, ապա ֆորվարդի հիմքում ընկած արժույթ է համարվում այն արժույթը, որի դիմաց տրամադրվում է Հայաստանի Հանրապետության դրամը,

բ. եթե ֆորվարդով փոխանակվող արժույթներից մեկը ԱՄՆ դոլար է, իսկ մյուսը՝ Հայաստանի Հանրապետության դրամից տարբեր արտարժույթ, ապա ԱՄՆ դոլարն է համարվում ֆորվարդի հիմքում ընկած արժույթ,

գ. եթե ֆորվարդով փոխանակվող արժույթներից մեկը եվրո է, իսկ մյուսը՝ Հայաստանի Հանրապետության դրամից և ԱՄՆ դոլարից տարբեր արտարժույթ, ապա եվրոն է համարվում ֆորվարդի հիմքում ընկած արժույթ,

դ. եթե ֆորվարդով փոխանակվում են Հայաստանի Հանրապետության դրամից, ԱՄՆ դոլարից և եվրոյից տարբեր արժույթներ, ապա ֆորվարդի հիմքում ընկած արժույթ է համարվում այն արտարժույթը, որի՝ ֆորվարդ պայմանագրով համաձայնեցված ծավալի հարաբերությունը մյուս արտարժույթի ֆորվարդով համաձայնեցված ծավալին ստացվում է 1-ից մեծ:

12) Սույն հաշվետվության 3-րդ և 4-րդ աղյուսակներում սվոփի հիմքում ընկած արժույթը որոշելիս երկու արժույթների ծավալների հարաբերության որոշման համար հիմք է ընդունվում սփոթ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալները: 5-րդ աղյուսակի համաձայն սվոփի հիմքում ընկած արժույթը տոկոսային վճարումների հաշվարկման համար հիմք հանդիսացող դրամական միջոցների արժույթն է:

13) Թիվ 32 հաշվետվության 3-րդ, 4-րդ և 5-րդ աղյուսակների սյուները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

ա. ***«Վճարվող տոկոսադրույքի վճարման պարբերականությունը»*** սյունակում լրացվում է վարկային կազմակերպության կողմից վճարվող տոկոսադրույքի պարբերականությունը (օրինակ՝ օրական, շաբաթական, ամսական, տարեկան և այլն):

բ. ***«Ստացվող տոկոսադրույքի վճարման պարբերականությունը»*** սյունակում լրացվում է վարկային կազմակերպությանը վճարվող տոկոսադրույքի պարբերականությունը (օրինակ՝ օրական, շաբաթական, ամսական, տարեկան և այլն):

գ. ***«Գործարքի տեսակը (ներգրավման սվոփ/տրամադրման սվոփ)»*** սյունակում սվոփի հիմքում ընկած արժույթի ներգրավման դեպքում լրացվում է «ներգրավման սվոփ», իսկ սվոփի հիմքում ընկած արժույթի տրամադրման դեպքում՝ «տրամադրման սվոփ»:

դ. ***«Սփոթ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալը»*** սյունակի «Սվոփի հիմքում ընկած արժույթի ծավալը» ենթասյունակում լրացվում է սփոթ գործարքի ընթացքում սվոփի հիմքում ընկած արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված սվոփի հիմքում ընկած արժույթով), իսկ «Գործարքի արժույթի ընդհանուր ծավալը» ենթասյունակում՝ սվոփի հիմքում ընկած արժույթի դիմաց տրամադրվող (ստացվող) արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված գործարքի արժույթով):

ե. ***«Ֆորվարդ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալը»*** սյունակի «Սվոփի հիմքում ընկած արժույթի ծավալը» ենթասյունակում լրացվում է ֆորվարդ գործարքի ընթացքում սվոփի հիմքում ընկած արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված սվոփի հիմքում ընկած արժույթով), իսկ «Գործարքի արժույթի ընդհանուր ծավալը» ենթասյունակում՝ սվոփի հիմքում ընկած արժույթի դիմաց տրամադրվող (ստացվող) արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված գործարքի արժույթով): Ընդ որում՝ փոխանակվող արժույթների ծավալն իր մեջ չի ներառում ներգրավված/տրամադրված արժույթների դիմաց վճարվող/ստացվող տոկոսագումարները (արժութային սվոփի դեպքում):

զ. ***«Սփոթ գործարքի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվ»*** սյունակում լրացվում է սփոթ գործարքի փաստացի իրականացման ամսաթիվը:

է. ***«Ֆորվարդի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվ»*** սյունակում լրացվում է ֆորվարդ գործարքի փաստացի իրականացման ամսաթիվը:»:

3) Կանոնակարգ 15-ի 31.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«31.1. Ձև թիվ 32 հաշվետվությունը ներկայացվում է յուրաքանչյուր օր մինչև ժամը 17:00-ն: Այն դեպքում, երբ հաշվետվության ներկայացման օրը վարկային կազմակերպության համար աշխատանքային է, իսկ Կենտրոնական բանկի համար՝ ոչ աշխատանքային, ապա հաշվետվության ներկայացման օր է համարվում Կենտրոնական բանկի համար ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը, ընդ որում՝ հաշվետվությունը ներկայացնելիս վարկային կազմակերպության համար աշխատանքային համարվող հաշվետու օրերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են Կենտրոնական բանկի համար ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա հաշվետվության մեջ:»:

2. Ձև թիվ 32-րդ հաշվետվության մեջ.

ա. 1-ին աղյուսակում «Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը» բառերը փոխարինել «Արժեթղթերի մինչև մարում եկամտաբերությունը» բառերով:

բ. 1-ին և 2-րդ աղյուսակներում «Գործարքի կնքման ամսաթիվը» սյունակից հետո լրացնել նոր սյունակ՝ «Գործարքի կատարման ամսաթիվը» վերնագրով:

գ. Լրացնել 3-րդ, 4-րդ և 5-րդ աղյուսակներ՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
7 մայիսի 2015 թ., N 109-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի մայիսի 5-ի թիվ 109-Ն որոշմամբ

«Աղյուսակ 3. Փոխարժեքային սվոփ գործարքների կնքման վերաբերյալ

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը _____

N	Գործարքի համարը	Գործարքի թվագիրը	Գործարքի տեսակը (ներառյալ սվոփ / տրամադրման սվոփ)	Սվոփի հիմքում ընկած արժույթի ISO կոդը	Սփոթ փոխարժեքը	Ֆորվարդ (գործարքի կնքման) փոխարժեքը	Գործարքի արժույթի ISO կոդը	Սփոթ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների գումարը (ծավալը)		Ֆորվարդ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների գումարը (ծավալը)		Գործարքի կնքման ամսաթիվ	Փոխհատուցման վճարման ամսաթիվ	Սփոթ գործարքի վերջնական փոխանակման ամսաթիվ	Ֆորվարդ գործարքի վերջնական փոխանակման ամսաթիվ	Գործարքի կնքման ամսաթիվ	Գործարքի տևողությունը	Միջնորդը
								Սվոփի հիմքում ընկած արժույթը (ծավալով)	Գործարքի վճարման արժույթը (ծավալով)	Սվոփի հիմքում ընկած արժույթը (ծավալով)	Գործարքի վճարման արժույթը (ծավալով)							

Հաշվետու անձի գլխավոր տնօրեն _____

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ _____

Աղյուսակ 4. Արժութային սվոփ գործարքների կնքման վերաբերյալ

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը _____

N	Գործարքի կնքման վայրը	Գործարքի կնքման ամսաթիվը	Գործարքի տեսակը (ըստ սվոփ / փսփո ցուցմունքների)	Սվոփի հիմնադրման ISO կոդը	Սվոփ փսփո	Ֆորվարդի (ցուցանդի) կոդը	Գործարքի ISO կոդը	Ներդրումային ֆիրմայում գործող վերլուծաբանի անունը	Ֆիրմայում գործող վերլուծաբանի կողմից տրված խորհրդատվության ամսաթիվը	Սվոփ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների գումարը (ծավալը)		Ֆորվարդ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների գումարը (ծավալը)		Գործարքի կնքման վայրը	Փոխհատուցման ենթակա գործարքի ամսաթիվը	Սվոփ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների հիմնադրման ամսաթիվը	Ֆորվարդի վերլուծաբանի անունը	Գործարքի կնքման վայրը	Ընտրի ուսյց վճարման	Միջնորդը
										Սվոփի հիմնադրման ընթացքում փոխանակվող արժույթի (ծավալ)	Մուտքագրված արժույթի (ծավալ)	Սվոփի հիմնադրման ընթացքում փոխանակվող արժույթի (ծավալ)	Մուտքագրված արժույթի (ծավալ)							

Հաշվետու անձի գլխավոր տնօրեն _____

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ _____

Աղյուսակ 5. Տոկոսադրույքային սվոփ գործարքների վերաբերյալ

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը _____

N	Գործարքի կողմերի համառոտ նկարագրությունը	Գործարքի տեսակը	Սվոփ գործարքի հիմքում ընկած տարժեքի (ֆինանսական գործիքի) նկարագրությունը	Գործարքի արժեքի ISO կոդը	Ժամկետայնությունը	Տոկոսադրույքի փոխանակման	Ստացվելիք տոկոսադրույքի արժեքի վերանայման ամսաթվերը	Վճարվելիք տոկոսադրույքի արժեքի վերանայման ամսաթվերը	Գործարքի արժեքը	Փոխհատուցման վճարման ենթակա գումարը	Սվոփ գործարքի կեղծ իրականացման ենթակա գումարը	Ֆուտյուրսի կեղծ իրականացման ենթակա գումարը	Գործարքի հիմնադրման ամսաթիվը	Գործարքի մյուս կողմը	Միջնորդը

Հաշվետու անձի գլխավոր տնօրեն _____

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ _____»:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել բանկերի կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների լրացման կարգը, սահմանել լողացող տոկոսադրույքով պարտքային արժեթղթերով կնքված գործարքների վերաբերյալ հաշվետվությունների լրացման առանձնահատկությունները,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իա» կետերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3) կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) Կանոնակարգ 3-ի 3-րդ կետի 1-ին պարբերությունում «միջոցով» բառից հետո լրացնել «(Կենտրոնական բանկի կողմից տրամադրված հասցեով)» բառերը,

2) Կանոնակարգ 3-ի 32-րդ կետում.

ա. 1-ին ենթակետում «նախորդող» բառից հետո լրացնել «աշխատանքային» բառը,

բ. 3-րդ ենթակետից հանել «՝ ամբողջական միավորներով» բառերը,

գ. 4-րդ ենթակետում.

գ1. «բ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«բ. «Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը» սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):»,

գ2. «գ» պարբերությունում «բնակության վայր» բառերը փոխարինել «մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն» բառերով,

գ3. «ե» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«ե. «Արժեթղթերի մինչև մարում եկամտաբերությունը» ոչ ծավալային ֆիքսված տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում սույն սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային արժեթղթերի դեպքում՝ գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով (մեթոդաբանությամբ): Ոչ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում սույն սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված ընթացիկ արժեկտրոնի զեղչման դրույքը (ընթացիկ արժեկտրոնը (առաջիկա վճարվելիք արժեկտրոնը) զեղչելու համար օգտագործվող շուկայական տոկոսադրույքը)՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով: Սույն սյունակը չի լրացվում այն արժեթղթերի համար, որոնց համար նախատեսված չէ եկամտաբերության հաշվարկ (օրինակ՝ հասարակ բաժնետոմսերի, բաժնեմասերի, ներդրումային ֆոնդերի

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. մայիսի 5-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.05.2015 թ. (ՀՀԳՏ N13 (525)[1], 22.05.2015):

փայերի (բաժնետոմսերի) կամ դրանցում մասնակիցների բաժնեմասը հավաստող նման այլ փաստաթղթերի համար և այլն): Ընդ որում՝ արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը հաշվարկվում է գործարքի կատարման (վերջնահաշվարկի) օրվա դրությամբ:»,

դ. 6-րդ ենթակետը լրացնել «ե» պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ե. «Գործարքի կատարման ամսաթիվը» սյունակում լրացվում է արժեթղթերի առուվաճառքի գործարքի վերջնահաշվարկի ամսաթիվը (օրինակ՝ 01/01/2015):»,

ե. 7-րդ ենթակետում.

ե1. հանել «, այդ թվում՝ լոմբարդային ռեպոների,» բառերը,

ե2. լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե», «զ», «է» պարբերություններ՝

«ե. «Գործարքի կատարման ամսաթիվը» սյունակում լրացվում է ռեպո/հակադարձ ռեպո գործարքի (առաջնային առքի/վաճառքի) վերջնահաշվարկի ամսաթիվը (օրինակ՝ 01/01/2015):

զ. «Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը» սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):

է. «Ռեպո/հակադարձ ռեպո գործարքի մարման ամսաթիվը» սյունակում լրացվում է ռեպո/հակադարձ ռեպո գործարքի մարման վերջնաժամկետը (օրինակ՝ 01/01/2015):

Սույն աղյուսակում անհրաժեշտ է լրացնել բոլոր ռեպո/հակադարձ ռեպո գործարքները (այդ թվում՝ լոմբարդային ռեպո գործարքները)՝ բացառությամբ միջօրյա ռեպո գործարքների: Այն դեպքում, երբ միջօրյա ռեպո գործարքը վերածնակերպվում է լոմբարդային ռեպո գործարքի, ապա այդ գործարքն անհրաժեշտ է ներառել սույն աղյուսակում, ընդ որում՝ այս դեպքում տվյալ գործարքը ներառում է հաջորդ հաշվետու օրվա հաշվետվության մեջ: Այն դեպքերում, երբ կնքված ռեպո/հակադարձ ռեպո գործարքների՝ հաշվետվության մեջ ներառման ենթակա տվյալները հայտնի չեն մինչև գործարքի կնքման օրվա ժամը 16:30-ը, ապա նշված գործարքների վերաբերյալ տեղեկությունները ներառվում են հաջորդ հաշվետու օրվա հաշվետվության մեջ:»,

զ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-րդ ենթակետով՝

«7.1) Այն դեպքում, երբ ռեպո/հակադարձ ռեպո գործարքի հիմքում ընկած են մի քանի տեսակի արժեթղթեր (մեկից ավելի ծածկագիր ունեցող արժեթղթեր), այդ գործարքները յուրաքանչյուր ծածկագրով արժեթղթի համար լրացվում են առանձին տողով: Ընդ որում՝ «Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով», «Քանակը» և «Ընդհանուր գումարը» սյունակներում լրացվում են յուրաքանչյուր ծածկագրով արժեթղթի համապատասխանաբար ընդհանուր անվանական արժեքը, քանակը (առկայության դեպքում) և յուրաքանչյուր արժեթղթի դիմաց ստացվող/տրամադրվող դրամական միջոցների ընդհանուր արժեքը:»,

է. 15-րդ ենթակետի «ե» պարբերությունում «արժույթով):» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն՝

«Ընդ որում՝ փոխանակվող արժույթների ծավալն իր մեջ չի ներառում ներգրավված/տրամադրված արժույթների դիմաց վճարվող/ստացվող տոկոսագումարները (արժութային սվոփի դեպքում):»,

3) Կանոնակարգ 3-ի 40.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«Թիվ 32 հաշվետվությունը ներկայացվում է յուրաքանչյուր օր մինչև ժամը 17:00-ն, որում ներառվում են տվյալ օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ից մինչև տվյալ օրվա ժամը 16:00-ն կնքված գործարքների (կատարված գործառնությունների) վերաբերյալ տեղեկությունները: Ընդ որում՝ եթե հաշվետվությունում ներառվող տեղեկություններում նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ որևէ փոփոխություն տեղի չի ունեցել, ապա հաշվետվությունը ներկայացվում է՝ միայն նշելով բանկի անվանումը և հաշվետվության ներկայացման ամսաթիվը՝ առանց լրացնելու աղյուսակի համապատասխան սյունակները:

Այն դեպքում, երբ հաշվետվության ներկայացման օրը բանկի համար աշխատանքային է, իսկ Կենտրոնական բանկի համար՝ ոչ աշխատանքային, ապա հաշվետվության ներկայացման օր է համարվում Կենտրոնական բանկի համար ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը, ընդ որում՝ հաշվետվությունը ներկայացնելիս բանկի համար աշխատանքային համարվող հաշվետու օրերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են Կենտրոնական բանկի համար ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա հաշվետվության մեջ:»,

4) Ձև թիվ 32-րդ հաշվետվության մեջ.

ա. 1-ին աղյուսակում «Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը» բառերը փոխարինել «Արժեթղթերի մինչև մարում եկամտաբերությունը» բառերով,

բ. 1-ին և 2-րդ աղյուսակներում «Գործարքի կնքման ամսաթիվը» սյունակից հետո լրացնել նոր սյունակ՝ «Գործարքի կատարման ամսաթիվը» վերնագրով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
7 մայիսի 2015 թ., N 110-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի ապրիլի 7-ի թիվ 83-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին[*]

Հաշվի առնելով, որ ՀՀ արժեթղթերի շուկայում նախատեսվում են թողարկվել նաև լողացող տոկոսադրույքով պարտքային արժեթղթեր,

նպատակ ունենալով սահմանել լողացող տոկոսադրույքով պարտքային արժեթղթերով կնքված գործարքների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման առանձնահատկությունները,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 135-րդ հոդվածը, 136-րդ հոդվածի 2-րդ մասը, 207-րդ հոդվածի 2-րդ մասը և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի ապրիլի 7-ի ««Կարգավորվող շուկայի օպերատորի կողմից իր ինտերնետային կայքում հրապարակվող տեղեկությունների ծավալը և հրապարակման կարգը» կանոնակարգ 5/06-ը հաստատելու մասին» թիվ 83-Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի կողմից իր ինտերնետային կայքում հրապարակվող տեղեկությունների ծավալը և հրապարակման կարգը» կանոնակարգ 5/06-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումը.

1) Կանոնակարգի 1-ին կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**5) «Արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը»** ոչ ծավալային ֆիքսված տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում սույն սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային արժեթղթերի դեպքում՝ գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով (մեթոդաբանությամբ): Ոչ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում սույն սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում՝ գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված ընթացիկ արժեկտրոնի զեղչման դրույքը (ընթացիկ արժեկտրոնը (առաջիկա վճարվելիք արժեկտրոնը) զեղչելու համար օգտագործվող շուկայական տոկոսադրույքը)՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով: Սույն սյունակը չի լրացվում այն արժեթղթերի համար, որոնց համար նախատեսված չէ եկամտաբերության հաշվարկ (օրինակ՝ հասարակ բաժնետոմսերի, բաժնեմասերի, ներդրումային ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) կամ դրանցում մասնակիցների բաժնեմասը հավաստող նման այլ փաստաթղթերի համար և այլն): Ընդ որում, արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը հաշվարկվում է գործարքի կատարման (վերջնահաշվարկի) օրվա դրությամբ:»,

2) Կանոնակարգի 11-րդ կետի.

ա. 4-րդ ենթակետում «տարեկան եկամտաբերությունը գործարքի կնքման պահին» բառերը փոխարինել «արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը» բառերով,

բ. 5-րդ ենթակետում «գործարքի նկատմամբ գնի,» բառերից հետո լրացնել «արժեթղթի մինչև մարում» բառերը,

3) Կանոնակարգի 11-րդ կետի 6-րդ և 7-րդ ենթակետերում, 16-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերում, 17-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերում «տարեկան» բառը փոխարինել «արժեթղթի մինչև մարում» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
7 մայիսի 2015 թ., N 111-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. մայիսի 5-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.05.2015 թ. (ՀՀԳՏ N13 (525)[1], 22.05.2015):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 357-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները համապատասխանեցնել արժեթղթերի հաշվարկային և հաշվառման համակարգում կատարված փոփոխություններին, ինչպես նաև արժեթղթերի ծածկագրերի վերաբերյալ պահանջվող տեղեկատվության լրացման հրահանգը համապատասխանեցնել արժեթղթերի ծածկագրերի շնորհման կարգում կատարված փոփոխություններին,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 182-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերը և 207-րդ հոդվածի 1-ին մասը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի ««Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ը հաստատելու մասին» թիվ 357-Ն որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
7 մայիսի 2015 թ., N 112-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. մայիսի 5-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.05.2015 թ. (ՀՀՊՏ N13 (525)[1], 22.05.2015):

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի մայիսի 5-ի թիվ 112-Ն որոշմամբ

«Հավելված

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 357-Ն որոշման

«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ՝ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՁԵՎԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 5/04

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիայի (այսուհետ՝ Կենտրոնական դեպոզիտարիա) կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգն ու ժամկետները, Կենտրոնական դեպոզիտարիայից Կենտրոնական դեպոզիտարիայի, արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի (այսուհետ՝ Համակարգ) անդամների և (կամ) նրանց գործունեության վերաբերյալ լրացուցիչ տեղեկանք, բացատրություն և (կամ) այլ փաստաթղթեր պահանջելու կարգը:

2. Սույն կանոնակարգում սահմանված հաշվետվությունների լրացման դրույթներով այլ բան սահմանված չլինելու դեպքում հաշվետվություններում ներառվող գումարներն արտահայտվում են Հայաստանի Հանրապետության դրամով (արտարժույթով արտահայտված գումարները վերահաշվարկվում են հաշվետու օրվա համար Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ ՀՀ դրամի նկատմամբ համապատասխան արտարժույթի հաշվարկային փոխարժեքով)՝ մեկ Հայաստանի Հանրապետության դրամի ճշտությամբ:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***«Ամսաթիվ»***՝ ամսաթիվը, ամիսն ու տարեթիվը (օրինակ՝ 01/01/2014 թ.):
2) ***«Հաշվետու տարի»***՝ հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը: Կենտրոնական դեպոզիտարիայի համար առաջին հաշվետու տարի է համարվում Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության լիցենզիա ստանալու օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:
3) ***«Հաշվետու եռամսյակ»***՝ օրացուցային տարվա սկզբից երեք ամիս պարբերականությամբ հաշվարկվող ժամանակաշրջան: Կենտրոնական դեպոզիտարիայի համար առաջին հաշվետու եռամսյակ է համարվում Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության լիցենզիա ստանալու օրվանից մինչև տվյալ եռամսյակի վերջը ընկած ժամանակաշրջանը:
4) ***«Հաշվետու ամիս»***՝ օրացուցային տարվա սկզբից մեկ ամիս պարբերականությամբ հաշվարկվող ժամանակաշրջան: Կենտրոնական դեպոզիտարիայի համար առաջին հաշվետու ամիս է համարվում Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության լիցենզիա ստանալու օրվանից մինչև տվյալ ամսվա վերջը ընկած ժամանակաշրջանը:
5) ***«Հաշվետու օր»***՝ յուրաքանչյուր օր, որի ընթացքում Կենտրոնական դեպոզիտարիան իրականացրել է գործունեություն:
6) ***«Հաշվետու ժամանակաշրջան»***՝ հաշվետու օր, հաշվետու ամիս, հաշվետու եռամսյակ կամ հաշվետու տարի:
7) ***«Պետական արժեթղթեր»***՝ Հայաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր:

4. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, ինչպես նաև Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կանոններում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ 2. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 3. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Կենտրոնական դեպոզիտարիան Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝ նշված պարբերականությամբ.


Հաշվետվության թիվը	Հաշվետվության անվանումը	Ներկայացման հաճախականությունը
1	*2*	*3*
1	Հաշվետվություն ֆինանսական վիճակի մասին	եռամսյակային, տարեկան
2	Հաշվետվություն ֆինանսական արդյունքների մասին	եռամսյակային, տարեկան
3	Հաշվետվություն սեփական կապիտալում փոփոխությունների մասին	եռամսյակային, տարեկան
4	Հաշվետվություն դրամական հոսքերի մասին	եռամսյակային, տարեկան
5	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	եռամսյակային, տարեկան
6	Հաշվետվություն կարգավորվող շուկայում արժեթղթերով գործարքների կնքման նպատակով դեպոնացված (լրացուցիչ դեպոնացված, ապադեպոնացված) միջոցների վերաբերյալ	օրական
7	Հաշվետվություն կարգավորվող շուկայից դուրս կնքված գործարքների արդյունքում Համակարգում գրառումներ կատարելու վերաբերյալ	օրական
8	Հաշվետվություն Համակարգի անդամի կարգավիճակի շնորհման և (կամ) դադարեցման վերաբերյալ	յուրաքանչյուր փոփոխության դեպքում
9	Հաշվետվություն Համակարգի անդամի կարգավիճակի կասեցման և (կամ) կասեցման դադարեցման վերաբերյալ	յուրաքանչյուր փոփոխության դեպքում
10	Հաշվետվություն Կենտրոնական դեպոզիտարիայում ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի փոխարկման վերաբերյալ	ամսական
12	Հաշվետվություն թողարկողների արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման վերաբերյալ	եռամսյակային
13	Հաշվետվություն արժեթղթերի հաշիվների վերաբերյալ	ամսական

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ: ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

6. Սույն կանոնակարգի 5-րդ կետով սահմանված հաշվետվությունները և այլ փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով (Կենտրոնական բանկի կողմից տրամադրված հասցեով)՝ Կենտրոնական բանկի կողմից ուղարկված պաշտպանված օրինակելի նմուշին (ֆայլին) համապատասխան, որոնց ձևերը սահմանված են սույն կանոնակարգի ՀԱՎԵԼՎԱԾ 1 - ՀԱՎԵԼՎԱԾ 8-ով: Սի-Բի-էյ-նեթ համակարգին միացված չլինելու դեպքում հաշվետվության էլեկտրոնային տարբերակը Կենտրոնական բանկ է ներկայացվում ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգով: Այդ համակարգերի խափանման դեպքում հաշվետվությունները ներկայացվում են մագնիսական կամ էլեկտրոնային այլ կրիչներով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն:

7. Հաշվետվությունների անվանումները պետք է կոդավորվեն:

8. Հաշվետվության անվանման կոդն ունի հետևյալ կառուցվածքը.



*ընդ որում, **«հաշվետվության համարը»** սյունակում լրացվում է տվյալ հաշվետվության 5-րդ կետով սահմանված «Հաշվետվության թիվը» (Թիվ 1 հաշվետվության լրացման դեպքում սույն սյունակում լրացվում է 01, Թիվ 2-ի դեպքում՝ 02 և այլն): Կոդավորման նշված կարգի պահպանումը պարտադիր է:*

9. Հաշվետվությունների ֆայլերը պետք է պարունակեն թվային հավաստագիր (բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվետվությունները ներկայացվում են Սի-Բի-էյ-նեթ համակարգով):

10. Օրական հաշվետվությունները ներկայացվում են մինչև հաշվետու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 12:00-ն, որում ներառվում են հաշվետվության ներկայացման օրվան նախորդող հաշ-

վետու օրվա ավարտի դրությամբ առկա տվյալները: Ընդ որում, եթե օրական հաշվետվություններում ներառվող տեղեկություններում որևէ փոփոխություն տեղի չի ունեցել, ապա հաշվետվությունները ներկայացվում են դատարկ՝ միայն նշելով Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը և հաշվետվության ներկայացման ամսաթիվը:

11. Ամսական և եռամսյակային հաշվետվությունները ներկայացվում են մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային օրը (ներառյալ):

12. Աուդիտի եզրակացությամբ հաստատված տարեկան հաշվետվությունները ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո 4-ամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հրապարակումից 5 օր հետո:

13. Թիվ 8 և 9 հաշվետվությունները ներկայացվում են մինչև յուրաքանչյուր փոփոխությունն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

14. Եթե հաշվետվության ներկայացման ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա հաշվետվության ներկայացման ժամկետի ավարտի օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

15. Սույն կանոնակարգով սահմանված ժամկետներից հետո ներկայացվող, սույն կանոնակարգով սահմանված ճշգրտված հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ սույն կանոնակարգի 6-րդ կետի համաձայն, ընդ որում, մի քանի ճշգրտված տարբերակների ներկայացման դեպքում հավաստի է համարվում ներկայացված վերջին տարբերակը:

16. Հաշվետվության էլեկտրոնային տարբերակը պետք է հնարավոր լինի ընթերցել էլեկտրոնային ֆորմատով, չպետք է լրացվի «յունիկոդ»-ով, երկու լրացված ամբողջական տողերի (ոչ յուրաքանչյուր սյունակի երկու լրացված տողերի) միջև դատարկ տողեր չպետք է լինեն, և այն պետք է զերծ լինի ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունից: Սույն կետի պահանջը չի գործում Կենտրոնական դեպոզիտարիայի նկատմամբ, եթե հաշվետվության էլեկտրոնային տարբերակի ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունն առկա է Կենտրոնական բանկի կողմից տրամադրված ֆայլերում:

17. Հաշվետվությունները լրացվում են միայն հայերեն տառերով (տառատեսակ՝ Թայմզ Արմենիան): Բացառություն են կազմում բանկերի Սվիֆտ կոդերը, Տելեքս համարները, արժեթղթերի տարբերակիչ ծածկագրերը և կոդերը:

18. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում պարունակվող տեղեկությունները պետք է լինեն արժանահավատ և ամբողջական:

ԳԼՈՒԽ 5. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻՑ ՏԵՂԵԿԱՆՔ, ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԿԱՐԳԸ

19. Կենտրոնական բանկն իրավունք ունի Կենտրոնական դեպոզիտարիայից, նրա պաշտոնատար անձանցից ծանուցմամբ պահանջել Կենտրոնական դեպոզիտարիայի, Համակարգի անդամների և (կամ) նրանց գործունեության վերաբերյալ լրացուցիչ տեղեկանք, բացատրություն և (կամ) այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրավասություններն իրականացնելու համար:

20. Կենտրոնական դեպոզիտարիային ծանուցում կարող է տրվել թղթային եղանակով, հեռախոսագրի, Կենտրոնական բանկի պաշտոնական էլեկտրոնային փոստի, Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով կամ կապի՝ սահմանված այլ պահուստային միջոցներով, ընդ որում, ծանուցման փաստաթուղթը ստորագրվում է Կենտրոնական բանկի՝ Կենտրոնական դեպոզիտարիայի վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կամ ղեկավարի տեղակալի կողմից:

21. Կենտրոնական դեպոզիտարիան կամ նրա պաշտոնատար անձը պարտավոր է պահանջվող լրացուցիչ տեղեկանքը, բացատրությունը և (կամ) փաստաթուղթը Կենտրոնական բանկ ներկայացնել սույն կանոնակարգի 20-րդ կետում նշված ծանուցումը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Կենտրոնական բանկի կողմից տրված ծանուցման մեջ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

22. Կենտրոնական դեպոզիտարիան պահանջվող լրացուցիչ տեղեկանքը, բացատրությունը և (կամ) փաստաթուղթը ներկայացնում է թղթային եղանակով կամ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով: Սի-Բի-էյ-նեթ համակարգին միացված չլինելու դեպքում դրանք ներկայացվում են ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգով: Այդ համակարգերի խափանման դեպքում պահանջվող լրացուցիչ տեղեկանքը, բացատրությունը և (կամ) փաստաթուղթը ներկայացվում է մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն:

23. Կենտրոնական դեպոզիտարիայի լիազոր ներկայացուցիչը կարող է հրավիրվել Կենտրոնական բանկի՝ Կենտրոնական դեպոզիտարիայի վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժա-

նում՝ հաշվետվությունների և սույն գլխով պահանջվող լրացուցիչ տեղեկանքի, բացատրության և (կամ) փաստաթղթի վերաբերյալ պարզաբանումներ ու մեկնաբանումներ տալու համար:

ԲԱԺԻՆ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 6. ԹԻՎ 1 - ԹԻՎ 5 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

24. Թիվ 1 - Թիվ 5 հաշվետվությունները լրացվում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և միջազգային ստանդարտների ուղեցույցներին համապատասխան՝ հազար դրամներով, առանց տասնորդական միավորների: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների Թիվ 5 հաշվետվության ձևի 5.3.4 կետի («Ֆինանսական արդյունքների հաշվետվությանը կից ծանոթագրություններ») «Ֆինանսական արդյունքների հաշվետվությանը կից ծանոթագրությունների այլ բացահայտումներ» բաժնում պետք է ներառվեն սույն կանոնակարգի Հավելված 1-ով սահմանված Աղյուսակ 23-ով պահանջվող տեղեկությունները:

ԳԼՈՒԽ 7. ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴԵՊՈՆԱՑՎԱԾ (ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԵՊՈՆԱՑՎԱԾ, ԱՊԱԴԵՊՈՆԱՑՎԱԾ) ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 6 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

25. Թիվ 6 հաշվետվությունում լրացվում են Համակարգի անդամների կողմից կարգավորվող շուկայում բաժնային և (կամ) ոչ բաժնային արժեթղթերով գործարքների կնքման համար դեպոնացված (լրացուցիչ դեպոնացված, ապադեպոնացված) արժեթղթերի և դրամական միջոցների վերաբերյալ տեղեկությունները՝ ամբողջ հաշվետու ժամանակաշրջանի (հաշվետու օրվա) համար: Ընդ որում, սույն հաշվետվությունը լրացվում է այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, ԱՄՆ դոլարով և այլն)՝ ամբողջական միավորներով, որով արտահայտված են դեպոնացված (լրացուցիչ դեպոնացված, ապադեպոնացված) միջոցները:

26. Սույն հաշվետվությունում Համակարգի անդամի հաճախորդներին պատկանող արժեթղթերի և դրամական միջոցների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են ամփոփ, այլ ոչ թե յուրաքանչյուր հաճախորդի համար առանձին:

27. Թիվ 6 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Հաշվետու օր»*** մասում լրացվում է փոխադարձ պահանջների և պարտավորությունների որոշման ամսաթիվը**:**
2) ***«Համակարգի անդամի կողը»*** սյունակում նշվում է Համակարգի անդամի՝ Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը (առկայության դեպքում):
3) ***«Միջոցների սեփականատերը»*** սյունակում նշվում է «սեփական»՝ սեփական արժեթղթերով և (կամ) դրամական միջոցներով գործարքների կնքման համար դեպոնացված (լրացուցիչ դեպոնացված, ապադեպոնացված) արժեթղթերի և (կամ) դրամական միջոցների դեպքում, կամ «հաճախորդ»՝ հաճախորդի արժեթղթերով և (կամ) դրամական միջոցներով գործարքների կնքման համար դեպոնացված (լրացուցիչ դեպոնացված, ապադեպոնացված) արժեթղթերի և (կամ) դրամական միջոցների դեպքում:
4) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Ծածկագիր (համարանիշ) չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):
5) ***«Առաջին փուլով դեպոնացված արժեթղթերի քանակը»*** սյունակում լրացվում է հաշվետու օրվա ընթացքում առաջին փուլով դեպոնացված արժեթղթերի քանակը՝ հատերով:
6) ***«Ընթացիկ դեպոնացված արժեթղթերի քանակը»*** սյունակում լրացվում է հաշվետու օրվա ընթացքում առաջին փուլին հաջորդող փուլերով դեպոնացված արժեթղթերի քանակը՝ հատերով:
7) ***«Ընթացիկ ապադեպոնացված արժեթղթերի քանակը»*** սյունակում լրացվում է հաշվետու օրվա ընթացքում ապադեպոնացված արժեթղթերի քանակը՝ հատերով:
8) ***«Առևտրային նստաշրջանի վերջում արժեթղթերի քանակը»*** սյունակում լրացվում է առևտրային նստաշրջանի վերջում մնացած արժեթղթերի քանակը՝ հատերով:
9) ***«Առաքման կամ ստացման ենթակա արժեթղթերի քանակը»*** սյունակում լրացվում է առևտրային նստաշրջանի վերջում և սկզբում առկա արժեթղթերի քանակների տարբերությունը՝ հատերով:

10) ***«Առաջին փուլով դեպոնացված դրամական միջոցները»*** սյունակում լրացվում է հաշվետու օրվա ընթացքում առաջին փուլով դեպոնացված դրամական միջոցների գումարը:
11) ***«Ընթացիկ դեպոնացված դրամական միջոցները»*** սյունակում լրացվում է հաշվետու օրվա ընթացքում առաջին փուլին հաջորդող փուլերով դեպոնացված դրամական միջոցների մեծությունը:
12) ***«Ընթացիկ ապադեպոնացված դրամական միջոցները»*** սյունակում լրացվում է հաշվետու օրվա ընթացքում ապադեպոնացված դրամական միջոցների մեծությունը:
13) ***«Դրամական միջոցների մնացորդը առևտրային նստաշրջանի վերջում»*** սյունակում լրացվում է առևտրային նստաշրջանից հետո մնացած դրամական միջոցների գումարը:
14) ***«Վճարման կամ ստացման ենթակա դրամական միջոցները»*** սյունակում լրացվում է առևտրային նստաշրջանի վերջում և սկզբում առկա դրամական միջոցների տարբերությունը:
15) ***«Արժույթի ISO կոդը»*** սյունակում լրացվում է այն արժույթի ISO կոդը, որով արտահայտված են միջոցները:

ԳԼՈՒԽ 8. ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻՑ ԴՈՒՐՍ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 7 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

28. Թիվ 7 հաշվետվությունում լրացվում են կարգավորվող շուկայից դուրս կնքված գործարքների արդյունքում Համակարգում գրառումներ կատարելու վերաբերյալ տեղեկությունները՝ ամբողջ հաշվետու ժամանակաշրջանի (հաշվետու օրվա) համար: Սույն հաշվետվությունը չի ներառում թողարկողի կողմից կոտորակային բաժնետոմսերի հետգնման հիմքով Համակարգում կատարված գրառումները: Ընդ որում, սույն հաշվետվությունը լրացվում է այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, դոլարով և այլն), որով կնքվել են գործարքները:

29. Թիվ 7 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Հաշվետու օր»*** մասում լրացվում է Համակարգում գրառումներ կատարելու ամսաթիվը**:**
2) ***«Գործարքի խմբի համարը»*** սյունակում լրացվում է գործարքի գրառման համար Համակարգի կողմից ստեղծված գործարքի խմբի առանձնահատուկ նույնականացուցիչ համարը: Այն դեպքում, երբ գործարքի խմբի առանձնահատուկ նույնականացուցիչ համարը հնարավորություն չի տալիս նույնականացնել գործարքի կողմերին, անհրաժեշտ է լրացնել գործարքի առանձնահատուկ նույնականացուցիչ համարը:
3) ***«Արժեթղթերի փոխանցման հիմքը»*** սյունակում լրացվում է «առուվաճառք»՝ առուվաճառքի գործարքների արդյունքում փոխանցման դեպքում, «ռեպո գործարքի կնքում» կամ «ռեպո գործարքի մարում» ռեպո և հակադարձ ռեպո գործարքների արդյունքում արժեթղթերի փոխանցման դեպքում, կամ «այլ»՝ այլ դեպքերում (օրինակ, նվիրատվության, ժառանգության արդյունքում, պարտավորության դիմաց և այլ հիմքերով արժեթղթերի փոխանցման դեպքում):
4) ***«Արժեթղթի դասը»*** սյունակում նշվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»: Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի առկայության դեպքում սույն սյունակը չի լրացվում: Սույն սյունակն օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:
5) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):
6) ***«Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը»*** սյունակում նշվում է թողարկողի ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը), գտնվելու վայրը (մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն)՝ արժեթղթի տարբերակիչ ծածկագրի բացակայության դեպքում: Սույն սյունակն օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:
7) ***«Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով»*** սյունակում լրացվում է արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը:
8) ***«Միավոր արժեթղթի գինը»*** սյունակում լրացվում է մեկ արժեթղթի գինը (հայտնի լինելու դեպքում):
9) ***«Արժույթի ISO կոդը»*** սյունակում լրացվում է այն արժույթի ISO կոդը, որով կնքվել է գործարքը (ոչ հատուցելի գործարքների դեպքում, այդ թվում՝ նվիրատվության, ժառանգության արդյունքում,

պարտավորության դիմաց և այլ հիմքերով արժեթղթերի փոխանցման դեպքում, նշվում է այն ISO արժույթի կոդը, որով արտահայտված է փոխանցված արժեթղթերի անվանական արժեքը):

10) ***«Արժեթղթերի քանակը»*** սյունակում լրացվում է տվյալ գործարքի արդյունքում փոխանցվող արժեթղթերի քանակը՝ հատերով: Սույն սյունակը չի լրացվում ծավալային արժեթղթերի դեպքում:
11) ***«Ընդհանուր գումարը»*** սյունակում լրացվում է կարգավորվող շուկայից դուրս կնքված գործարքի ընդհանուր գումարը (հայտնի լինելու դեպքում):
12) ***«Արժեթղթի՝ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված լինելու կարգավիճակը»*** սյունակում կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերի համար լրացվում է «թույլատրված», իսկ կարգավորվող շուկայում առևտրին չթույլատրված արժեթղթերի համար՝ «չթույլատրված»:
13) ***«Կարգավիճակը»*** ենթասյունակում լրացվում է «սեփականատեր», «անվանատեր», «բաժնային սեփականատեր» կամ «համասեփականատեր»: Ընդ որում՝ բաժնային սեփականատիրոջ կամ համասեփականատիրոջ դեպքում յուրաքանչյուր սեփականատիրոջ համար սույն աղյուսակը լրացվում է առանձին տողով:
14) ***«Ռեզիդենտությունը»*** սյունակում նշվում է «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ» (հայտնի լինելու դեպքում):

ԳԼՈՒԽ 9. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԴԱՄԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 8 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

30. Թիվ 8 հաշվետվությունում լրացվում են Համակարգի անդամի կարգավիճակի շնորհման և (կամ) դադարեցման վերաբերյալ տեղեկությունները Համակարգի անդամի կարգավիճակի շնորհման և (կամ) դադարեցման դեպքում: Սույն հաշվետվության իմաստով Համակարգի անդամի կարգավիճակի շնորհման և (կամ) դադարեցման պահ է համարվում Համակարգի անդամի կարգավիճակի շնորհման և (կամ) դադարեցման ուժի մեջ մտնելու պահը: Այն դեպքերում, երբ Համակարգի անդամին շնորհվել է որևէ կարգավիճակ և միաժամանակ մեկ այլ կարգավիճակ դադարեցվել է, ապա սույն հաշվետվությունն անհրաժեշտ է լրացնել երկու տողով:

31. Թիվ 8 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Համակարգի անդամի կոդը»*** սյունակում նշվում է Համակարգի անդամի՝ Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը (առկայության դեպքում):
2) ***«Համակարգի անդամի ծածկագիրը»*** սյունակում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից համակարգի անդամին շնորհված առևտրային ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տվյալ անդամին շնորհված ծածկագիրը:
3) ***«Համակարգի անդամի կարգավիճակը»*** սյունակում լրացվում է «Հաշվի օպերատոր» այն անդամների համար, որոնց շնորհվել է միայն հաշվի օպերատորի կարգավիճակ (կամ դադարեցվել է Համակարգի անդամի տվյալ կարգավիճակը), կամ լրացվում է «Հաշվարկային համակարգի անդամ» այն անդամների համար, որոնց շնորհվել է միայն կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակ (կամ դադարեցվել է Համակարգի անդամի տվյալ կարգավիճակը), կամ լրացվում է «Հաշվի օպերատոր և հաշվարկային համակարգի անդամ» այն անդամների համար, որոնց միաժամանակ շնորհվել է հաշվի օպերատորի և կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներ (կամ միաժամանակ դադարեցվել են Համակարգի անդամի տվյալ կարգավիճակները):
4) ***«Համակարգի անդամի կարգավիճակի շնորհում/դադարեցում»*** սյունակում լրացվում է «Կարգավիճակի շնորհում» կամ «Կարգավիճակի դադարեցում»:
5) ***«Համակարգի անդամի կարգավիճակի շնորհման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է տվյալ անդամին Համակարգի անդամի կարգավիճակի շնորհման փաստացի ուժի մեջ մտնելու ամսաթիվը:
6) ***«Համակարգի անդամի կարգավիճակի դադարեցման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է տվյալ անդամին Համակարգի անդամի կարգավիճակի դադարեցման ուժի մեջ մտնելու ամսաթիվը:
7) ***«Համակարգի անդամի կարգավիճակի դադարեցման իրավական հիմքերը»*** սյունակում լրացվում են արժեթղթերի շուկան կարգավորող օրենքների և (կամ) այլ իրավական ակտերի համապատասխան դրույթները, որոնց հիման վրա Համակարգի անդամի կարգավիճակը դադարեցվել է (համապատասխան օրենքի կամ այլ իրավական ակտի անվանումը, ինչպես նաև համապատասխան հոդվածը (գլուխը), մասը (կետը), կետը (ենթակետը, պարբերությունը)՝ կախված իրավական ակտի համարակալման կառուցվածքից):

ԳԼՈՒԽ 10. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԴԱՄԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԿԱՍԵՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԿԱՍԵՑՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 9 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

32. Թիվ 9 հաշվետվությունում լրացվում են Համակարգի անդամի կարգավիճակի կասեցման և (կամ) կասեցման դադարեցման վերաբերյալ տեղեկությունները Համակարգի անդամի կարգավիճակի կասեցման և (կամ) կասեցման դադարեցման դեպքում: Սույն հաշվետվության իմաստով Համակարգի անդամի կարգավիճակի կասեցման և (կամ) կասեցման դադարեցման պահ է Համակարգի անդամի կարգավիճակի կասեցման և (կամ) կասեցման դադարեցման ուժի մեջ մտնելու պահը: Այն դեպքերում, երբ Համակարգի անդամի որևէ կարգավիճակ կասեցվել է, և միաժամանակ մեկ այլ կարգավիճակի կասեցումը դադարեցվել է, ապա սույն հաշվետվությունն անհրաժեշտ է լրացնել երկու տողով:

33. Թիվ 9 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Համակարգի անդամի կոդը»*** սյունակում նշվում է Համակարգի անդամի՝ Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը (առկայության դեպքում):
2) ***«Համակարգի անդամի ծածկագիրը»*** սյունակում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից համակարգի անդամին շնորհված առևտրային ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տվյալ անդամին շնորհված ծածկագիրը:
3) ***«Համակարգի անդամի կասեցված կարգավիճակը»*** սյունակում լրացվում է Համակարգի անդամի այն կարգավիճակի անվանումը, որը կասեցվել է, մասնավորապես՝ լրացվում է «Հաշվի օպերատոր» այն անդամների համար, որոնց միայն հաշվի օպերատորի կարգավիճակը կասեցվել է, կամ լրացվում է «Հաշվարկային համակարգի անդամ» այն անդամների համար, որոնց միայն կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակը կասեցվել է, կամ լրացվում է «Հաշվի օպերատոր և հաշվարկային համակարգի անդամ» այն անդամների համար, որոնց հաշվի օպերատորի և կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակները միաժամանակ կասեցվել են:
4) ***«Համակարգի անդամի կարգավիճակի կասեցում/կասեցման դադարեցում»*** սյունակում լրացվում է «Կարգավիճակի կասեցում» կամ «Կարգավիճակի կասեցման դադարեցում»:
5) ***«Համակարգի անդամի կարգավիճակի կասեցման ժամկետը»*** սյունակում նշվում են Համակարգի անդամի կարգավիճակի կասեցման սկիզբը և ավարտը, մասնավորապես, սկիզբը ենթասյունակում նշվում է, օրինակ, 01/01/2015 թ., իսկ ավարտը սյունակում՝ 01/02/2015 թ.: Եթե կասեցման վերջնաժամկետը (ավարտը) հայտնի չէ, ապա ավարտը ենթասյունակը չի լրացվում:
6) ***«Համակարգի անդամի կարգավիճակի կասեցման իրավական հիմքերը»*** սյունակում լրացվում են արժեթղթերի շուկան կարգավորող օրենքների (կամ) այլ իրավական ակտի համապատասխան դրույթները, որոնց հիման վրա Համակարգի անդամի կարգավիճակը կասեցվել է (համապատասխան օրենքի, այլ իրավական ակտի անվանումը, ինչպես նաև համապատասխան հոդվածը (գլուխը), մասը (կետը), կետը (ենթակետը), պարբերությունը):
7) ***«Համակարգի անդամի կարգավիճակի կասեցման դադարեցման իրավական հիմքերը»*** սյունակում լրացվում են արժեթղթերի շուկան կարգավորող օրենքների և (կամ) այլ իրավական ակտի համապատասխան դրույթները, որոնց հիման վրա Համակարգի անդամի կարգավիճակի կասեցումը դադարեցվել է (համապատասխան օրենքի կամ այլ իրավական ակտի անվանումը, ինչպես նաև համապատասխան հոդվածը (գլուխը), մասը (կետը), կետը (ենթակետը), պարբերությունը):

ԳԼՈՒԽ 11. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅՈՒՄ ՌԵԵՍՏՐ ՎԱՐՈՂ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 10 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

34. Թիվ 10 հաշվետվությունում լրացվում են այն թողարկողների արժեթղթերի փոխարկման վերաբերյալ տեղեկությունները, որոնց ռեեստրը վարում է Կենտրոնական դեպոզիտարիան և որոնց փոխարկումը գրանցվել է Համակարգում: Սույն հաշվետվության համաձայն տեղեկությունները լրացվում են ամբողջ հաշվետու ժամանակաշրջանի (հաշվետու ամսվա) համար:

35. Թիվ 10 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը»*** սյունակում նշվում են թողարկողի ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը), գտնվելու վայրը (մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն): Սույն սյունակը լրացվում է արժեթղթի տարբերակիչ ծածկագրի բացակայության դեպքում: Սույն սյունակն օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:

2) ***«Փոխարկում իրականացնելու համար որոշմամբ նախատեսված ժամկետը»*** սյունակում նշվում են փոխարկման որոշմամբ նախատեսված փոխարկման իրականացման սկիզբը և ավարտը, մասնավորապես, սկիզբը ենթասյունակում նշվում է, օրինակ, 01/01/2015 թ., իսկ ավարտը սյունակում՝ 01/02/2015 թ.:
3) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Ծածկագիր չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):
4) ***«Արժեթղթի դասը»*** սյունակում նշվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»: Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի առկայության դեպքում սույն սյունակը չի լրացվում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:
5) ***«Արժեթղթի փոխարկման ձևը»*** սյունակում նշվում է «բաժանում», «կոնսոլիդացիա» կամ «փոխանակում»:
6) ***«Եթե արժեթղթերի փոխարկումը վերակազմակերպման արդյունք է, ապա վերակազմակերպման ձևը»*** սյունակում նշվում է «միաձուլում», «միացում», «բաժանում», «առանձնացում» կամ «վերակազմավորում»:
7) ***«Այն արժեթղթերի դասը (դասերը), որին (որոնց) փոխարկվում են տվյալ արժեթղթերը»*** սյունակում նշվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»:
8) ***«Արժեթղթերի փոխարկման սկզբունքը»*** սյունակում նշվում է տվյալ դասի արժեթղթերի փոխարկման բանաձևը կամ գործակիցը:
9) ***«Արժեթղթերի ընդհանուր քանակը»*** սյունակում նշվում է մինչև փոխարկումը և փոխարկումից հետո առկա արժեթղթերի քանակը (ըստ յուրաքանչյուր դասի)՝ հատերով:

ԳԼՈՒԽ 12. ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ (ԱՆՎԱՆԱՏԵՐԵՐԻ) ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 12 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

36. Թիվ 12 հաշվետվությունում լրացվում են այն թողարկողների սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ տեղեկությունները, որոնց ռեեստրը վարում է Կենտրոնական դեպոզիտարիան: Սույն հաշվետվության համաձայն տեղեկությունները լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի (հաշվետու եռամսյակի) վերջի դրությամբ: Թիվ 12 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը»*** սյունակում նշվում են թողարկողի ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը), գտնվելու վայրը (մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն): Սույն սյունակը լրացվում է արժեթղթի տարբերակիչ ծածկագրի բացակայության դեպքում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:
2) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Ծածկագիր չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):
3) ***«Արժեթղթի դասը»*** սյունակում նշվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»: Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի առկայության դեպքում սույն սյունակը չի լրացվում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:
4) ***«Արժեթղթի՝ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված լինելու կարգավիճակը»*** սյունակում կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերի համար լրացվում է «թույլատրված», իսկ կարգավորվող շուկայում առևտրին չթույլատրված արժեթղթերի համար՝ «չթույլատրված»:
5) ***«Քանակը»*** սյունակում նշվում է տվյալ ծածկագիրն ունեցող արժեթղթերի քանակը՝ հատերով:
6) ***«Հաշվետու ժամանակաշրջանի վերջում արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) թիվը»*** սյունակի ***«ընդհանուր թիվը»*** ենթասյունակում լրացվում է տվյալ ծածկագիրն ունեցող արժեթղթերի

համար Համակարգում բացված սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվներ ունեցող սեփականատերերի թվի և Համակարգում բացված անվանատիրոջ հաշիվներ ունեցող անվանատերերի թվի հանրագումարը:

7) ***«Հաշվետու ժամանակաշրջանի վերջում արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) թիվը»*** սյունակի ***«ոչ ռեզիդենտ սեփականատերերի (անվանատերերի) թիվը»*** ենթասյունակում լրացվում է տվյալ ծածկագիրն ունեցող արժեթղթերի համար Կենտրոնական դեպոզիտարիայի Համակարգում բացված սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվներ ունեցող ոչ ռեզիդենտ սեփականատերերի թվի և Համակարգում բացված անվանատիրոջ հաշիվներ ունեցող ոչ ռեզիդենտ անվանատերերի թվի հանրագումարը:
8) ***«Հաշվետու ժամանակաշրջանի վերջում արժեթղթերի սեփականատերերի թիվը»*** սյունակի ***«թողարկման ծավալի 5%-ը գերազանցող սեփականատերերի թիվը»*** ենթասյունակում լրացվում է տվյալ ծածկագիրն ունեցող արժեթղթերի համար Կենտրոնական դեպոզիտարիայի Համակարգում բացված սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվներ ունեցող թողարկման ծավալի 5%-ը գերազանցող սեփականատերերի թիվը:
9) ***«Հաշվի օպերատոր»*** տվյալ թողարկողին միջնորդային ծառայություն մատուցող անձ՝ համաձայն Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների (առկայության դեպքում):

ԳԼՈՒԽ 13. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 13 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

37. Թիվ 13 հաշվետվությունում լրացվում են Համակարգում առկա սեփականատիրոջ և անվանատիրոջ արժեթղթերի հաշիվների (բացառությամբ փակված կամ միավորված հաշիվների) վերաբերյալ ամփոփ տվյալները: Սույն հաշվետվության համաձայն տեղեկությունները լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի (հաշվետու ամսվա) վերջի դրությամբ:

38. Թիվ 13 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Հաշվի տեսակը»*** սյունակում լրացվում է «սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվ» կամ «անվանատիրոջ հաշիվ»: Այն դեպքում, երբ միևնույն հաշվի սեփականատեր են համարվում մեկից ավելի սեփականատերեր, նշվում է «սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվ»:
2) ***«Հաշվետիրոջ իրավաբանական կարգավիճակը»*** սյունակում լրացվում է «իրավաբանական անձ» կամ «ֆիզիկական անձ»:
3) ***«Հաշվետիրոջ ռեզիդենտությունը»*** սյունակում լրացվում է «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ»՝ կախված նրանից, թե արժեթղթերի հաշվի սեփականատերը կամ անվանատերը ռեզիդենտ է, թե ոչ ռեզիդենտ:
4) ***«Հաշվի օպերատոր»*** տվյալ հաշվետիրոջը միջնորդային ծառայություն մատուցող անձ՝ համաձայն Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների (առկայության դեպքում):
5) ***«Արժեթղթի թողարկման երկիրը»*** սյունակում լրացվում է «ՀՀ» Հայաստանի Հանրապետությունում թողարկված արժեթղթերի դեպքում, այլ դեպքերում նշվում է «օտարերկրյա»:
6) ***«Արժեթղթի դասը»*** սյունակում լրացվում է «բաժնային», «պետական» կամ «այլ պարտքային»:
7) ***«Քանակը»*** սյունակում լրացվում է տվյալ Համակարգում առկա սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներում գրանցված արժեթղթերի ընդհանուր քանակը (ըստ յուրաքանչյուր արժեթղթի դասի)՝ հատերով: Սույն սյունակը ծավալային արժեթղթերի դեպքում չի լրացվում:
8) ***«Ծավալը»*** սյունակում լրացվում է սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը:
9) ***«Գրավադրված արժեթղթեր»*** սյունակի «քանակը» կամ «ծավալը» ենթասյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներում առկա գրավադրված արժեթղթերի համապատասխանաբար ընդհանուր քանակը՝ հատերով կամ ընդհանուր ծավալը (ըստ յուրաքանչյուր արժեթղթի դասի), իսկ «այդ թվում՝ քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի քանակը» կամ «այդ թվում՝ քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի ծավալը» ենթասյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներում առկա միայն այն գրավադրված արժեթղթերի համապատասխանաբար ընդհանուր քանակը կամ ընդհանուր անվանական արժեքը, որոնց նկատմամբ կիրառվել է ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում: Ընդ որում՝ տարբեր հիմքերով գրավադրված միևնույն արժեթղթերը համարվում են գրավադրված միայն մեկ անգամ: Ընդ որում՝ «քանակը», «այդ թվում՝ քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի քանակը» և «այդ թվում՝ քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի քանակը» սյունակները չեն լրացվում ծավալային արժեթղթերի դեպքում:

10) ***«Արգելադրված արժեթղթեր»*** սյունակի «քանակը» կամ «ծավալը» ենթասյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներում առկա այն արժեթղթերի համապատասխանաբար քանակը՝ հատերով կամ անվանական արժեքը (ըստ յուրաքանչյուր արժեթղթի դասի), որոնցով գործառնությունների իրականացման վրա արգելք (սահմանափակում) է դրվել (բացառությամբ գրավադրման հիմքով արգելանքի): Ընդ որում՝ տարբեր հիմքերով արգելադրված միևնույն արժեթղթերը համարվում են արգելադրված միայն մեկ անգամ: Ընդ որում՝ «քանակը» սյունակը չի լրացվում ծավալային արժեթղթերի դեպքում:

Հավելված 1

«Կենտրոնական դեպոզիտարիայի՝
Կենտրոնական բանկ ներկայացվող
հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը,
ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ի

Աղյուսակ 23. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայություններից եկամուտ

(հազար դրամ)

	Ցուցանիշի անվանումը	Նախորդող տարվա (միջանկյալ) համապատասխան ժամանակաշրջան (նախնական տվյալներ)	Հաշվետու տարվա (միջանկյալ) համապատասխան ժամանակաշրջան (նախնական տվյալներ)	Նախորդող տարվա համապատասխան ժամանակաշրջան	Հաշվետու տարվա համապատասխան ժամանակաշրջան
1.	**Եկամուտներ թողարկողներին մատուցվող արժեթղթերի հաշվառման ծառայություններից, այդ թվում՝**				
1.1.	Սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման և պահպանման ծառայություններից				
1.2.	Տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառմամբ պայմանավորված ծառայություններից				
1.3.	Թողարկողի կորպորատիվ գործողությամբ պայմանավորված ծառայություններից				
1.4.	Թողարկողի հարցման հիման վրա իր կամ իր կողմից թողարկված (տեղաբաշխված) արժեթղթերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման հետ կապված ծառայություններից				
2.	**Եկամուտներ թողարկողներին մատուցվող լրացուցիչ ծառայություններից, այդ թվում՝**				
2.1.	Թողարկողի հանձնարարագրի հիման վրա շահութաբաժինների հաշվարկման և վճարման ծառայություններից				
2.2.	Թողարկողի հանձնարարագրի հիման վրա պարտատոմսերի արժեկտրոնների վճարման կամ մարման արդյունքում դրամական միջոցների բաշխման ծառայություններից				
2.3.	Թողարկողին արժեթղթերի (փայերի) գործառնությունների մասին (արժեթղթերի (փայերի) փոխանցման հանձնարարականների և արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ) ծանուցման ծառայություններից				
2.4.	Թողարկողին օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված արժեթղթերի ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողության իրականացման ծառայություններից				

3.	**Եկամուտներ հաշվետուներին մատուցվող ծառայություններից, այդ թվում՝**				
3.1.	Գրանցված սեփականատերերի (անվանատերերի) արժեթղթերի հաշիվների բացման և պահպանման հետ կապված ծառայություններից				
3.2.	Արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված ծառայություններից				
3.3.	Արժեթղթերի գրավադրման, սառեցման, ձայնի իրավունքի սահմանափակման գրանցման հետ կապված ծառայություններից				
3.4.	Հաշվետիրոջը տեղեկությունների տրամադրման ծառայություններից				
4.	**Եկամուտներ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահպանման և այդ արժեթղթերով գործարքների սպասարկման ծառայություններից, այդ թվում՝**				
4.1.	Արժեթղթերի պահպանման ծառայությունների մատուցումից				
4.2.	Կորպորատիվ գործողություններից				
4.3.	Ժողովներին հեռակա մասնակցության ապահովման ծառայություններից				
4.4.	Արժեթղթերով վերջնահաշվարկի կատարման ծառայություններից				
4.5.	Դրամական միջոցներով վերջնահաշվարկի կատարման ծառայություններից				
4.6.	Հաշվետվությունների տրամադրման ծառայություններից				
5.	**Եկամուտներ հաշվի օպերատորի և կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակի շնորհում և սպասարկման ծառայություններից**				
6.	**Եկամուտներ հաճախորդներին SWIFT համակարգի միջոցով տեղեկությունների ներկայացման ծառայություններից**				
7.	**Եկամուտներ կարգավորվող շուկայում կնքված գործարքների արդյունքում քլիրինգի և վերջնահաշվարկի հետ կապված ծառայություններից**				
8.	**Եկամուտներ Օրենքով և արժեթղթերի շուկան կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված անձանց շրջանակներից դուրս այլ անձանց կողմից ներկայացված հարցումների վերաբերյալ պատասխանի ներկայացման ծառայություններից**				
9.	**Եկամուտներ արժեթղթերի սառեցման գրանցման հետ կապված ծառայություններից**				
10.	**Եկամուտներ արժեթղթերի ծածկագրերի շնորհման ծառայություններից**				
11.	**Եկամուտների վարկային ռեսուրսների առևտրի սահմանաչափերի հաշվարկման, տրամադրման և քլիրինգի ծառայություններից**				
12.	**Եկամուտներ գույքի գրավով ապահովված արժեթղթերի պահպանման ծառայություններից**				
13.	**Եկամուտներ կիրառված տույժերից**				
14.	**Եկամուտներ մատուցվող այլ ծառայություններից**				
11	**Ընդամենը**				

Հավելված 2

«Կենտրոնական դեպոզիտարիայի՝
Կենտրոնական բանկ ներկայացվող
հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը,
ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴԵՊՈՆԱՑՎԱԾ (ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԵՊՈՆԱՑՎԱԾ, ԱՊԱԴԵՊՈՆԱՑՎԱԾ) ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(օրական)

Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը _____

Հաշվետու օր _____

N	Հաշվառման պահման համակարգում գտնվող միջոցների տեսակը	Համակարգի անդամի կոդը	Միջոցների տեսակը	ԱՐԺԵԹՂԹԵՐ						ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ					
				Ընկերության կանոնադրական կապիտալում տեղաբաժնի ձևով ներդրումներ	Առևտրի ենթակա արժեթղթեր	Ներդրումային արժեթղթեր	Ածանցյալ արժեթղթեր	Ներդրումային ֆոնդերի միավորներ	Պարտատոմսեր	Առևտրի ենթակա դրամական միջոցներ	Ներդրումային դրամական միջոցներ	Դրամական միջոցների ընդհանուր մնացորդում ներդրումային միջոցների մասնաբաժին	Պարտատոմսերի դրամական միջոցներ	Վարկային միջոցներ	Այլ միջոցներ
1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															
16															
17															
18															
19															
20															
21															

Հավելված 3

«Կենտրոնական դեպոզիտարիայի՝
Կենտրոնական բանկ ներկայացվող
հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը,
ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻՑ ԴՈՒՐՍ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը _____

Հաշվետու օր _____

N	Գործարքի համարը	Արժեթղթերի փոխանցման հիմքը	Արժեթղթի դասը	Արժեթղթի տեսակը կամ ֆինանսական գործիքի տեսակը	Ներդրումային ֆինանսական միջնորդի անվանումը, որի միջոցով կնքվել է գործարքը	Արժեթղթերի քանակը	Միավոր արժեքը	Արժեթղթի ISIN կոդը	Արժեթղթի տեսակը	Ընդհանուր գումարը	Արժեթղթերը ստացող անձը			Արժեթղթերը փոխանցող անձը		
											Հաշվեհամարը (ընդհանուր հիշողության)	Անվանումը	Հաշվեհամարը	Հաշվեհամարը (ընդհանուր հիշողության)	Անվանումը	Հաշվեհամարը
1																
2																
3																
4																
5																
6																
7																
8																
9																
10																
11																
12																
13																
14																
15																
16																
17																
18																
19																
20																
21																
22																
23																

Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր տնօրեն _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Կ.S.

Հավելված 4

«Կենտրոնական դեպոզիտարիայի՝
Կենտրոնական բանկ ներկայացվող
հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը,
ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԴԱՄԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(յուրաքանչյուր փոփոխության դեպքում)

Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը _____

Հաշվետու օր _____

N	Համակարգի անդամի անվանումը	Համակարգի անդամի կոդը	Համակարգի անդամի ծածկագիրը	Համակարգի անդամի կարգավիճակը	Համակարգի անդամի կարգավիճակի փոփոխության շնորհում/դադարեցում	Համակարգի անդամի կարգավիճակի ստացման հիմքը դիմումի ներկայացման ամսաթիվը	Հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակի շնորհման ամսաթիվը	Հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակի դադարեցման ամսաթիվը	Հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակի դադարեցման իրավական հիմքերը
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									
11									
12									
13									
14									
15									
16									
17									
18									
19									
20									

Հավելված 5

«Կենտրոնական դեպոզիտարիայի՝
Կենտրոնական բանկ ներկայացվող
հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը,
ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԴԱՄԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԿԱՍԵՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(յուրաքանչյուր փոփոխության դեպքում)

Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը _____

Հաշվետու օր _____

N	Համակարգի անդամի անվանումը	Համակարգի անդամի կոդը	Համակարգի անդամի ծածկագիրը	Համակարգի անդամի կնքված միջնորդական պայմանագրի համարը	Համակարգի անդամի կնքված միջնորդական պայմանագրի/ լիազորագրի ամսաթիվը	Համակարգի անդամի կարգավիճակի կասեցման ժամկետը		Համակարգի անդամի կնքված միջնորդական պայմանագրի ընդհատման ամսաթիվը
						սկիզբը	ավարտը	
1								
2								
3								
4								
5								
6								
7								
8								
9								
10								
11								
12								
13								
14								
15								
16								
17								
18								
19								
20								
21								
22								
23								
24								
25								
26								
27								
28								
29								
30								
31								
32								
33								
34								
35								
36								
37								
38								
39								
40								

Հավելված 6

«Կենտրոնական դեպոզիտարիայի՝
Կենտրոնական բանկ ներկայացվող
հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը,
ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅՈՒՄ ՌԵԵՍՏՐ ՎԱՐՈՂ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ամսական)

Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը _____

Ամսաթիվը _____ թ-ից
մինչև _____ թ.

N	Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը	Փոխարկման ծառայության ներկայացման ամսաթիվը	Փոխարկում իրականացնելու համար որոշմամբ նախատեսված ժամկետը		Արժեթղթի տարեբերանիշ ծածկագիրը	Արժեթղթի դասը	Արժեթղթի փոխարկման ձևը	Եթե արժեթղթերի փոխարկումը վերակազմակերպման արդյունք է, ապա վերակազմակերպման ձևը	Այն արժեթղթերի դասը (դասերը), որին (որոնց) փոխարկվում են տվյալ արժեթղթերը	Արժեթղթերի փոխարկման սկզբունքը	Արժեթղթերի ընդհանուր քանակը		Կոտորակային արժեթղթերի գրանցված սեփականատերերի (անձնամատնանշների) թիվը
			սկիզբ	ավարտ							մինչև փոխարկումը	փոխարկումից հետո	
1													
2													
3													
4													
5													
6													
7													
8													
9													
10													
11													
12													
13													
14													
15													
16													
17													
18													
19													

Հավելված 7

«Կենտրոնական դեպոզիտարիայի՝
Կենտրոնական բանկ ներկայացվող
հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը,
ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ (ԱՆՎԱՆԱՏԵՐԵՐԻ) ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(եռամսյակային)

Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից*

մինչև _____ *թ.*

N	Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը	Արժեթղթի տարեբաժնիչ ծածկագիրը	Արժեթղթի տոկոսադրույքը	Արժեթղթի՝ կարգավորվող շուկայում տեղակայված թողարկման վիճակագրական կոդը	Քաղաք	Ռեեստրի վարման սպասարկման կենտրոնի անվանումը	Հաշվետու ժամանակաշրջանի վերջում թողարկողի տվյալ դասի արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) թիվը			Հաշվի օպերատոր
							Ընդհանուր թիվը	այդ թվում՝		
								ոչ ռեզիդենտ սեփականատերերի (անվանատերերի) թիվը	թողարկման ծավալի 5 %-ը գերազանցող սեփականատերերի թիվը	
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										
12										
13										
14										
15										
16										
17										
18										
19										
20										
21										
22										

Հավելված 8

«Կենտրոնական դեպոզիտարիայի՝
Կենտրոնական բանկ ներկայացվող
հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը,
ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ամսական)

Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից*

մինչև _____ *թ.*

Հաշիվների թիվը *(ՀՀ դրամ)*

N	Հաշվի տեսակ	Ներդրումային ընկերությունների հաշիվներ	Հաշվեփոխանցումներ	Հաշիվ օպերատորի	Ընդհանուր մուտքեր	Մուտքեր	Ելքեր	Մնացորդ	Գրավադրված արժեթղթեր				Արգելադրված արժեթղթեր	
									Ելք	Ելք՝ դրված կնքված գործարքների ներքո	Մուտք	Մուտք՝ դրված կնքված գործարքների ներքո	Մուտք	Ելք
1														
2														
3														
4														
5														
6														
7														
8														
9														
10														
11														
12														

»:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 356-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով սահմանել լողացող տոկոսադրույքով պարտքային արժեթղթերով կնքված գործարքների վերաբերյալ հաշվետվությունների լրացման առանձնահատկությունները, ինչպես նաև արժեթղթերի ծածկագրերի վերաբերյալ պահանջվող տեղեկատվության լրացման հրահանգը համապատասխանեցնել արժեթղթերի ծածկագրերի շնորհման կարգում կատարված փոփոխություններին,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 141-րդ և 207-րդ հոդվածները և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի ««Կարգավորվող շուկայի օպերատորի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ը հաստատելու մասին» թիվ 356-Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «2. Սույն կանոնակարգում սահմանված հաշվետվությունների լրացման դրույթներով այլ բան սահմանված չլինելու դեպքում հաշվետվություններում ներառվող գումարներն արտահայտվում են Հայաստանի Հանրապետության դրամով (արտարժույթով արտահայտված գումարները վերահաշվարկվում են հաշվետու օրվա համար Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ ՀՀ դրամի նկատմամբ համապատասխան արտարժույթի հաշվարկային փոխարժեքով)՝ մեկ Հայաստանի Հանրապետության դրամի ճշտությամբ:»,

2) Կանոնակարգի 3-րդ կետի 14-րդ և 15-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել,

3) Կանոնակարգի 5-րդ կետի աղյուսակի 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «Կարգավորվող շուկայում պետական արժեթղթերով և արտարժույթով գործարքների կնքման նպատակով դեպոնացված (լրացուցիչ դեպոնացված, ապադեպոնացված) միջոցների վերաբերյալ»,

4) Կանոնակարգի 6-րդ կետում «միջոցով» բառից հետո լրացնել «(Կենտրոնական բանկի կողմից տրամադրված հասցեով)» բառերը,

5) Կանոնակարգի 22-րդ կետում «ընթացքում» բառից հետո լրացնել «, եթե Կենտրոնական բանկի կողմից տրված ծանուցման մեջ ավելի երկար ժամկետ սահմանված չէ» բառերը,

6) Կանոնակարգի 25-րդ կետում «Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2001 թվականի դեկտեմբերի 12-ի «Կազմակերպությունների տարեկան (ամբողջական փաթեթով միջանկյալ) ֆինանսական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 465 հրամանով սահմանված կարգով» բառերը փոխարինել «ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և միջազգային ստանդարտների ուղեցույցներին համապատասխան» բառերով,

7) Կանոնակարգի 26-րդ կետից հանել «ամբողջ հաշվետու ժամանակաշրջանի (հաշվետու օրվա) համար» և «՝ ամբողջական միավորներով» բառերը,

8) Կանոնակարգում լրացնել հետևյալ բովանդակությամբ 26.1-ին կետ.

   «26.1. Թիվ 6 հաշվետվության համածայն՝ բոլոր թվերը կլորացվում են 5 նիշի ճշտությամբ:»,

9) Կանոնակարգի 27.1-ին կետում.

   ա. լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին ենթակետ.

   «4.1) ***«Գործարքի կատարման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է արժեթղթերի առուվաճառքի գործարքի վերջնահաշվարկի ամսաթիվը (մասնավորապես՝ 01/01/2015):»,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. մայիսի 5-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.05.2015 թ. (ՀՀԳՏ N13 (525)[1], 22.05.2015):

բ. 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը:»,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ ենթակետ.

«6.1) ***«Արժեթղթի ծավալն անվանական արժեքով»*** սյունակում լրացվում է արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը:»,

դ. 11-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«11) ***«Արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը»*** ոչ ծավալային ֆիքսված տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում սույն սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային արժեթղթերի դեպքում գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով (մեթոդաբանությամբ): Ոչ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում սույն սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում՝ գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված ընթացիկ արժեկտրոնի զեղչման դրույքը (ընթացիկ արժեկտրոնը (առաջիկա վճարվելիք արժեկտրոնը) զեղչելու համար օգտագործվող շուկայական տոկոսադրույքը)՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով: Սույն սյունակը չի լրացվում այն արժեթղթերի համար, որոնց համար նախատեսված չէ եկամտաբերության հաշվարկ (օրինակ՝ հասարակ բաժնետոմսերի, բաժնեմասերի, ներդրումային ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) կամ դրանցում մասնակիցների բաժնեմասը հավաստող նման այլ փաստաթղթերի համար և այլն): Ընդ որում, արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը հաշվարկվում է գործարքի կատարման (վերջնահաշվարկի) օրվա դրությամբ:»,

10) Կանոնակարգի 27.3-րդ կետում.

ա. լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ ենթակետ.

«4.1) ***«Գործարքի կատարման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է ռեպո գործարքի (առաջնային առքի/վաճառքի) վերջնահաշվարկի ամսաթիվը (մասնավորապես՝ 01/01/2015):»,

բ. 7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) ***«Գործարքի առարկա արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը:»,

գ. 11-րդ ենթակետում «Ռեպո տոկոսադրույքը (տարեկան)» բառերը փոխարինել «Տարեկան ռեպո տոկոսադրույքը» բառերով,

դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 11.1-րդ ենթակետ.

«11.1) **«Ռեպո գործարքի մարման ամսաթիվը»** սյունակում լրացվում է ռեպո գործարքի մարման վերջնաժամկետը (մասնավորապես՝ 01/01/2015):»,

11) Կանոնակարգի 33-րդ կետի.

ա. 1-ին ենթակետում «բնակության վայրը» բառերը փոխարինել «մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն» բառերով,

բ. 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը:»,

12) Կանոնակարգի 35-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը:»,

13) Կանոնակարգի 37-րդ կետում.

ա. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը:»,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ ենթակետ.

«4.1) ***«Արժեթղթի ծավալն անվանական արժեքով»*** սյունակում լրացվում է արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը:»,

14) Կանոնակարգի գլուխ 11-ի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 11. «ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԵՎ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴԵՊՈՆԱՑՎԱԾ (ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԵՊՈՆԱՑՎԱԾ, ԱՊԱԴԵՊՈՆԱՑՎԱԾ) ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 12 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ»,

15) Կանոնակարգի 38-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«38. Թիվ 12 հաշվետվությունում լրացվում են շուկայի մասնակիցների (անդամների) կողմից կարգավորվող շուկայում պետական արժեթղթերով և արտարժույթով գործարքների կնքման համար դեպոնացված (լրացուցիչ դեպոնացված, ապադեպոնացված) արժեթղթերի և դրամական միջոցների վերաբերյալ տեղեկությունները՝ ամբողջ հաշվետու ժամանակաշրջանի (հաշվետու օրվա) համար:»,

16) Կանոնակարգի 39-րդ կետում «մինչև առևտրային նստաշրջանը դեպոնացված և (կամ) առևտրային նստաշրջանից հետո մնացած դրամական միջոցները» բառերը փոխարինել «դեպոնացված (լրացուցիչ դեպոնացված, ապադեպոնացված) դրամական միջոցները» բառերով,

17) Կանոնակարգի 40-րդ կետում.

ա. լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ և 1.2-րդ ենթակետեր.

«1.1) ***«Կարգավորվող շուկայի մասնակցի (անդամի) կոդը»*** սյունակում նշվում է կարգավորվող շուկայի մասնակցի (անդամի)՝ Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը (առկայության դեպքում),

1.2) ***«Միջոցների սեփականատերը»*** սյունակում լրացվում է «սեփական»՝ սեփական արժեթղթերով և (կամ) դրամական միջոցներով գործարքների կնքման համար դեպոնացված (լրացուցիչ դեպոնացված, ապադեպոնացված) արժեթղթերի և (կամ) դրամական միջոցների դեպքում, կամ «հաճախորդ»՝ հաճախորդի արժեթղթերով և (կամ) դրամական միջոցներով գործարքների կնքման համար դեպոնացված (լրացուցիչ դեպոնացված, ապադեպոնացված) արժեթղթերի և (կամ) դրամական միջոցների դեպքում»,

բ. 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) **«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը: Եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը:»,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-րդ, 3.2-րդ, 6.1-րդ և 6.2-րդ ենթակետեր.

«3.1) ***«Լրացուցիչ դեպոնացված արժեթղթերի ծավալը»*** սյունակում լրացվում է առևտրային նստաշրջանի ընթացքում դեպոնացված արժեթղթերի ծավալը:

3.2) ***«Ապադեպոնացված արժեթղթերի ծավալը»*** սյունակում լրացվում է առևտրային նստաշրջանի ընթացքում ապադեպոնացված արժեթղթերի ծավալը:»,

«6.1) ***«Լրացուցիչ դեպոնացված դրամական միջոցները»*** սյունակում լրացվում է առևտրային նստաշրջանի ընթացքում դեպոնացված դրամական միջոցների մեծությունը:

6.2) ***«Ապադեպոնացված դրամական միջոցները»*** սյունակում լրացվում է առևտրային նստաշրջանի ընթացքում ապադեպոնացված դրամական միջոցների մեծությունը:»,

դ. 9-րդ ենթակետից հանել «մինչև առևտրային նստաշրջանը դեպոնացված և (կամ) առևտրային նստաշրջանից հետո մնացած դրամական» բառերը,

18) Կանոնակարգի 44-րդ կետում.

ա. 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը: Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը:»,

բ. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ***«Տարեկան եկամտաբերությունը՝ միջին օրական հաշվարկով»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր տրանշի պետական պարտատոմսի տարեկան եկամտաբերությունը՝ միջին օրական հաշվարկով, որը որոշվում է հետևյալ եղանակով. տվյալ օրվա առևտրային նստաշրջանի ընթացքում՝ ժամը 11:10-ի, 12:00-ի, 13:00-ի, 14:00-ի և 15:00-ի դրությամբ, վերցվում են տվյալ պետական պարտատոմսի լավագույն առքի և վաճառքի գնանշվող տարեկան եկամտաբերությունները և հաշվարկվում դրանց միջին արժեքը, այնուհետև հաշվարկվում է տվյալ միջին արժեքների միջինը: Եթե նշված ժամերից որևէ ժամի դրությամբ չեն գնանշվել լավագույն առքի կամ վաճառքի տարեկան եկամտաբերությունները, ապա այդ պարտատոմսի համար լավագույն առքի և վաճառքի տարեկան եկամտաբերության միջին օրական հաշվարկի համար վերցվում են այդ ժամից հետո մինչև մյուս սահմանված ժամն ընկած ամենամոտ պահին տվյալ պետական պարտատոմսի լավագույն առքի և վաճառքի գնանշվող տարեկան եկամտաբերությունները»,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ և 5-րդ ենթակետեր.

«4) ***«Լավագույն առքի տարեկան եկամտաբերությունը՝ միջին օրական հաշվարկով»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր տրանշի պետական պարտատոմսի լավագույն առքի տարեկան եկամտաբերությունը՝ միջին օրական հաշվարկով, որը որոշվում է հետևյալ եղանակով. տվյալ օրվա առևտրային նստաշրջանի ընթացքում՝ ժամը 11:10-ի, 12:00-ի, 13:00-ի, 14:00-ի և 15:00-ի դրությամբ, վերցվում են տվյալ պետական պարտատոմսի լավագույն առքի գնանշվող տարեկան եկամտաբերությունները և հաշվարկվում դրանց միջին արժեքը: Եթե նշված ժամերից որևէ մեկի դրությամբ չեն գնանշվել առքի տարեկան եկամտաբերությունները, ապա այդ պարտատոմսի համար լավագույն առքի տարեկան եկամտաբերության միջին օրական հաշվարկի համար վերցվում են այդ ժամից հետո մինչև մյուս սահմանված ժամն ընկած ամենամոտ պահին գնանշված լավագույն առքի տարեկան եկամտաբերությունները:

«5) ***«Լավագույն վաճառքի տարեկան եկամտաբերությունը՝ միջին օրական հաշվարկով»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր տրանշի պետական պարտատոմսի լավագույն վաճառքի տարեկան եկամտաբերությունը՝ միջին օրական հաշվարկով, որը որոշվում է հետևյալ եղանակով. տվյալ օրվա առևտրային նստաշրջանի ընթացքում՝ ժամը 11:10-ի, 12:00-ի, 13:00-ի, 14:00-ի և 15:00-ի դրությամբ, վերցվում են տվյալ պետական պարտատոմսի լավագույն վաճառքի գնանշվող տարեկան եկամտաբերությունները և հաշվարկվում դրանց միջին արժեքը: Եթե նշված ժամերից որևէ մեկի դրությամբ չեն գնանշվել վաճառքի տարեկան եկամտաբերությունները, ապա այդ պարտատոմսի համար լավագույն վաճառքի տարեկան եկամտաբերության միջին օրական հաշվարկի համար վերցվում են այդ ժամից հետո մինչև մյուս սահմանված ժամն ընկած ամենամոտ պահին գնանշված լավագույն վաճառքի տարեկան եկամտաբերությունները:»,

19) Կանոնակարգի Հավելված 2-ի.

ա. 1-ին աղյուսակում «Գործարքի կնքման ժամը» սյունակից հետո լրացնել նոր սյունակ՝ «Գործարքի կատարման ամսաթիվը» վերնագրով, «Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը» սյունակից հետո լրացնել նոր սյունակ՝ «Արժեթղթի ծավալն անվանական արժեքով» վերնագրով, և «Արժեթղթի տարեկան եկամտաբերությունը» բառերը փոխարինել «Արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը» բառերով,

բ. 3-րդ աղյուսակում «Գործարքի կնքման ժամը» սյունակից հետո լրացնել նոր սյունակ՝ «Գործարքի կատարման ամսաթիվը» վերնագրով, «Գործարքի առարկա արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը» սյունակից հետո լրացնել նոր սյունակ՝ «Արժեթղթի ծավալն անվանական արժեքով» վերնագրով,

20) Կանոնակարգի Հավելված 7-ի 1-ին և 2-րդ աղյուսակներում «Արժույթի ISO կոդը» սյունակից հետո լրացնել նոր սյունակ՝ «Արժեթղթի ծավալն անվանական արժեքով» վերնագրով,
21) Հաստատել կանոնակարգի Հավելված 8-ը նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:
22) Կանոնակարգի Հավելված 10-ի աղյուսակի վերջում լրացնել նոր սյուներ՝ «Լավագույն առքի տարեկան եկամտաբերությունը՝ միջին օրական հաշվարկով» և «Լավագույն վաճառքի տարեկան եկամտաբերությունը՝ միջին օրական հաշվարկով» վերնագրերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
7 մայիսի 2015 թ., N 113-Ն

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի մայիսի 5-ի թիվ 113-Ն որոշմամբ

Հավելված 8

«Կարգավորվող շուկայի օպերատորի՝ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03 հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԵՎ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴԵՊՈՆԱՑՎԱԾ (ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԵՊՈՆԱՑՎԱԾ, ԱՊԱԴԵՊՈՆԱՑՎԱԾ) ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(օրական)

Օպերատորի անվանումը _____

Հաշվետու օր _____

N	Կարգավորվող շուկայի մասնակցի (անդամի) անվանումը	Միջոցների սեփականատերը	ԱՐԺԵԹՂԹԵՐ						ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ					
			Կարճաժամկետ վճռագրեր	Երկարաժամկետ կառավարության պարտատոմսեր	Կարճաժամկետ կորպորատիվ պարտատոմսեր	Երկարաժամկետ կորպորատիվ պարտատոմսեր	Կարճաժամկետ այլ արժեթղթեր	Երկարաժամկետ այլ արժեթղթեր	Դրամական միջոցները ստանդարտ դրամական միավորով	Կենտրոնական բանկում եղած դրամական միջոցները	Լրացուցիչ դեպոզիտային միջոցները	Ստանդարտ դրամական միավորով այլ միջոցներ	Դրամական միջոցների մնացորդները ստանդարտ դրամական միավորի փոխարկմամբ	Արտ ISO կոդ
1														
2														
3														
...														

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով սահմանել լողացող տոկոսադրույքով պարտքային արժեթղթերով կնքված գործարքների վերաբերյալ հաշվետվությունների լրացման առանձնահատկությունները, արժեթղթերի ծածկագրերի վերաբերյալ պահանջվող տեղեկատվության լրացման հրահանգը համապատասխանեցնել արժեթղթերի ծածկագրերի շնորհման կարգում կատարված փոփոխություններին, ինչպես նաև ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները համապատասխանեցնել արժեթղթերի հաշվառման համակարգում կատարված փոփոխություններին,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածը և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ը հաստատելու մասին» թիվ 140-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) 2-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) ***«Հաշվետու շաբաթ»***՝երկուշաբթի օրվանից մինչև կիրակի օրը (ներառյալ) ընկած ժամանակաշրջան: Ներդրումային ընկերության համար (տվյալ լիցենզիայի մասով) առաջին հաշվետու շաբաթ է համարվում տվյալ ներդրումային ծառայության մատուցման լիցենզիան ստանալու օրվանից մինչև տվյալ շաբաթվա կիրակի օրը (ներառյալ) ընկած ժամանակաշրջանը: Ներդրումային ծառայություններ մատուցող անձ համարվող բանկի համար առաջին հաշվետու շաբաթ է համարվում ներդրումային ծառայությունների մատուցման վերաբերյալ Կենտրոնական բանկին տեղեկացմանը հաջորդող 15-րդ օրվանից մինչև տվյալ շաբաթվա կիրակի օրը (ներառյալ) ընկած ժամանակաշրջանը:»,

2) Կանոնակարգի 4-րդ կետի աղյուսակի՝

ա. 17-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

բ. 18-րդ կետում «շաբաթական» բառից հետո լրացնել «ամսական» բառը,

3) Կանոնակարգի 5.1-ին կետն ուժը կորցրած ճանաչել,

4) Կանոնակարգի 8-րդ կետից հանել «, 17» թիվը,

5) Կանոնակարգի 9-րդ կետում «միջոցով» բառից հետո լրացնել «(Կենտրոնական բանկի կողմից տրամադրված հասցեով)» բառերը,

6) Կանոնակարգի 21-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«21. Թիվ 4 հաշվետվությունը ներկայացվում է մինչև տվյալ ներդրումային ընկերության բաժնետոմսերի (բաժնեմասերի) ռեեստրը վարողի կողմից բաժնետոմսերի (բաժնեմասերի) գրանցմանը հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Նոր ստեղծվող ներդրումային ընկերությունների համար սույն հաշվետվական ձևը ներկայացվում է մինչև ներդրումային ընկերության գրանցման և լիցենզավորման մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:»,

7) Կանոնակարգի 22-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

8) Կանոնակարգի 23-րդ կետում «օրը:» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Այն դեպքերում, երբ հաշվետվության ներկայացման ժամկետի վերջին օրը ներդրումային ծառայություններ մատուցող անձի համար աշխատանքային է, իսկ Կենտրոնական բանկի համար՝ ոչ աշխա-

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. մայիսի 5-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.05.2015 թ. (ՀՀԳՏ N13 (525)[1], 22.05.2015):

տանքային, ապա հաշվետվության ներկայացման վերջին օր է համարվում Կենտրոնական բանկի համար ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը, ընդ որում՝ այս դեպքում օրական հաշվետվություններ ներկայացնելիս ներդրումային ծառայություններ մատուցող անձի համար աշխատանքային համարվող հաշվետու օրերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են Կենտրոնական բանկի համար ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա հաշվետվության մեջ:»,

9) Կանոնակարգի 28-րդ կետից հանել «՝ համաձայն «Ֆինանսական հաշվետվողականության հիմունքների» (“The Conceptual Framework for Financial Reporting” (Դ քընսեփչյուըլ ֆրեյմվորք ֆոր ֆայնենշլ րիփորթինգ)) պահանջների» բառերը,

10) Կանոնակարգի 49-րդ կետում՝

ա. «նախորդող» բառից հետո լրացնել «աշխատանքային» բառը,

բ. հանել «՝ ամբողջական միավորներով» բառերը,

11) Կանոնակարգի 52-րդ կետում՝

ա. 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):»,

բ. 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) ***«Արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը»*** ոչ ծավալային ֆիքսված տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում սույն սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային արժեթղթերի դեպքում՝ գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով (մեթոդաբանությամբ): Ոչ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում սույն սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում՝ գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված ընթացիկ արժեկտրոնի զեղչման դրույքը (ընթացիկ արժեկտրոնը (առաջիկա վճարվելիք արժեկտրոնը) զեղչելու համար օգտագործվող շուկայական տոկոսադրույքը)՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով: Սույն սյունակը չի լրացվում այն արժեթղթերի համար, որոնց համար նախատեսված չէ եկամտաբերության հաշվարկ (օրինակ՝ հասարակ բաժնետոմսերի, բաժնեմասերի, ներդրումային ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) կամ դրանցում մասնակիցների բաժնեմասը հավաստող նման այլ փաստաթղթերի համար և այլն): Ընդ որում, արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը հաշվարկվում է գործարքի կատարման (վերջնահաշվարկի) օրվա դրությամբ:»,

12) Կանոնակարգի 52-րդ կետի 5-րդ ենթակետում, 75-րդ կետի 3-րդ ենթակետում և 77-րդ կետի 4-րդ ենթակետում «բնակության վայր» բառերը փոխարինել «մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն» բառերով,

13) Կանոնակարգի 54-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ ենթակետ.

«5) ***«Գործարքի կատարման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է արժեթղթերի առուվաճառքի գործարքի վերջնահաշվարկի ամսաթիվը (օրինակ՝ 01/01/2015):»,

14) Կանոնակարգի 55-րդ կետում.

ա. հանել «(այդ թվում՝ լոմբարդային ռեպոների)» բառերը,

բ. «տեղեկությունները:» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Սույն աղյուսակում անհրաժեշտ է լրացնել բոլոր ռեպո/հակադարձ ռեպո գործարքները (այդ թվում՝ լոմբարդային ռեպո գործարքները)՝ բացառությամբ միջօրյա ռեպո գործարքների: Այն դեպքում, երբ միջօրյա ռեպո գործարքը վերածնակերպվում է լոմբարդային ռեպո գործարքի, ապա այդ գործարքն անհրաժեշտ է ներառել սույն աղյուսակում, ընդ որում՝ այս դեպքում տվյալ գործարքը ներառվում է հաջորդ հաշվետու օրվա հաշվետվության մեջ: Այն դեպքերում, երբ կնքված ռեպո/հակադարձ ռեպո գործարքների՝ հաշվետվության մեջ ներառման ենթակա տվյալները հայտնի չեն մինչև գործարքի կնքման օրվա ժամը 16:30-ը, ապա նշված գործարքների վերաբերյալ տեղեկությունները ներառվում են հաջորդ հաշվետու օրվա հաշվետվության մեջ:»,

15) Կանոնակարգի 56-րդ կետում.

ա. լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.2-րդ ենթակետ.

«1.2) ***«Գործարքի կատարման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է ռեպո/հակադարձ ռեպո գործարքի (առաջնային առքի/վաճառքի) վերջնահաշվարկի ամսաթիվը (օրինակ՝ 01/01/2015):»,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-րդ ենթակետ.

«3.1) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով՝ շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):»,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին ենթակետ.

«6.1) ***«Ռեպո/հակադարձ ռեպո գործարքի մարման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է ռեպո/հակադարձ ռեպո գործարքի մարման վերջնաժամկետը (մասնավորապես՝ 01/01/2015):»,

16) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 56.1-ին ենթակետով.

«56.1. Այն դեպքում, երբ ռեպո/հակադարձ ռեպո գործարքի հիմքում ընկած են մի քանի տեսակի արժեթղթեր (մեկից ավելի ծածկագիր ունեցող արժեթղթեր), այդ գործարքները յուրաքանչյուր ծածկագրով արժեթղթի համար լրացվում են առանձին տողով: Ընդ որում՝ «Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով», «Քանակը» և «Ընդհանուր գումարը» սյունակներում լրացվում են յուրաքանչյուր ծածկագրով արժեթղթի համապատասխանաբար ընդհանուր անվանական արժեքը, քանակը (առկայության դեպքում) և յուրաքանչյուր արժեթղթի դիմաց ստացվող/տրամադրվող դրամական միջոցների ընդհանուր արժեքը:»,

17) Կանոնակարգի 71-րդ կետի 5-րդ ենթակետում «գործարքի արժույթով):» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Ընդ որում՝ փոխանակվող արժույթների ծավալն իր մեջ չի ներառում ներգրավված/տրամադրված արժույթների դիմաց վճարվող/ստացվող տոկոսագումարները (արժութային սվոփի դեպքում):»,

18) Կանոնակարգի 74-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«74. Թիվ 8 հաշվետվությունում լրացվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի արժեթղթերի փաթեթի կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվությունը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների տեսանկյունից սույն հաշվետվական ձևում արտացոլվում են ինչպես հակադարձ ռեպո գործարքի արդյունքում սեփականության իրավունքով ձեռք բերված և դեռևս հետ չվաճառված արժեթղթերի, այնպես էլ ռեպո գործարքի արդյունքում վաճառված և դեռևս հետ չգնված արժեթղթերի մասին տեղեկությունները: Ընդ որում՝ սույն հաշվետվությունը լրացվում է հազար դրամներով: Թիվ 8 հաշվետվությունում տվյալները լրացվում են ամփոփ, այլ ոչ թե ըստ յուրաքանչյուր գործարքի:»,

19) Կանոնակարգի 75-րդ կետում.

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):»,

բ. 6-րդ ենթակետում «լրացվում է արժեթղթի հաշվեկշռային» բառերից հետո լրացնել «(հակադարձ ռեպո գործարքի արդյունքում ձեռքբերված արժեթղթերի դեպքում՝ հետհաշվեկշռային)» բառերը,

գ. 8-րդ ենթակետում ««հակադարձ ռեպո»,» բառերից հետո լրացնել «հակադարձ ռեպո գործարքի արդյունքում ձեռք բերված արժեթղթերի տնօրինման իրավունքի՝ տվյալ գործարքի կնքումից հետո որևէ ձևով սահմանափակման դեպքում՝ «գրավադրված և հակադարձ ռեպո», ռեպո գործարքի արդյունքում վաճառված և դեռևս հետ չգնված արժեթղթերի դեպքում՝ «ռեպո»,» բառերը:

20) Կանոնակարգի 77-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից

սահմանված կարգով՝ շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):»,

21) Կանոնակարգի 79-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«79. Թիվ 10 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) ***«Հաշվի տեսակը»*** սյունակում լրացվում է «սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվ» կամ «անվանատիրոջ հաշիվ»: Այն դեպքում, երբ միևնույն հաշվի սեփականատեր են համարվում մեկից ավելի սեփականատերեր, նշվում է «սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվ»:

2) ***«Հաշվետիրոջ իրավաբանական կարգավիճակը»*** սյունակում լրացվում է «իրավաբանական անձ» կամ «ֆիզիկական անձ»:

3) ***«Հաշվետիրոջ ռեզիդենտությունը»*** սյունակում լրացվում է «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ»՝ կախված նրանից, թե արժեթղթերի հաշվի սեփականատերը կամ անվանատերը ռեզիդենտ է, թե ոչ ռեզիդենտ:

4) ***«Արժեթղթի դասը»*** սյունակում լրացվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»: Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի առկայության դեպքում սույն սյունակը չի լրացվում: Սույն սյունակն օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրն առկա է, թե ոչ:

5) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Ծածկագիր չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):

6) ***«Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը»*** սյունակում նշվում է թողարկողի ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը), գտնվելու վայրը (մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն)՝ արժեթղթի տարբերակիչ ծածկագրի բացակայության դեպքում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրն առկա է, թե ոչ:

7) ***«Քանակը»*** սյունակում լրացվում է տվյալ սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներում գրանցված արժեթղթերի ընդհանուր քանակը (ըստ յուրաքանչյուր արժեթղթի դասի)՝ հատերով, այդ թվում՝ գրավադրված և սառեցված արժեթղթերի քանակը: Սույն սյունակը ծավալային արժեթղթերի դեպքում չի լրացվում:

8) ***«Ծավալը»*** սյունակում լրացվում է սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը, այդ թվում՝ գրավադրված և սառեցված արժեթղթերի անվանական արժեքը (առկայության դեպքում):

9) ***«Գրավադրված արժեթղթեր»*** սյունակի «քանակը» կամ «ծավալը» ենթասյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներում առկա գրավադրված արժեթղթերի համապատասխանաբար ընդհանուր քանակը՝ հատերով կամ ընդհանուր անվանական արժեքը (ըստ յուրաքանչյուր արժեթղթի ծածկագրի), իսկ «այդ թվում՝ քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի քանակը» կամ «այդ թվում՝ քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի ծավալը» ենթասյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներում առկա միայն այն գրավադրված արժեթղթերի համապատասխանաբար ընդհանուր քանակը կամ ընդհանուր անվանական արժեքը, որոնց նկատմամբ կիրառվել է ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում: Ընդ որում՝ տարբեր հիմքերով գրավադրված միևնույն արժեթղթերը համարվում են գրավադրված միայն մեկ անգամ: Ընդ որում՝ «քանակը», «այդ թվում՝ քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի քանակը» և «այդ թվում՝ քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի քանակը» ենթասյունակները չեն լրացվում ծավալային արժեթղթերի դեպքում:

10) ***«Արգելադրված արժեթղթեր»*** սյունակի «քանակը» կամ «ծավալը» ենթասյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներում առկա այն արժեթղթերի համապատասխանաբար քանակը՝ հա-

տերով կամ ծավալը (ըստ յուրաքանչյուր արժեթղթի ծածկագրի), որոնցով գործառնությունների իրականացման վրա արգելք (սահմանափակում) է դրվել (բացառությամբ գրավադրման հիմքով արգելանքի): Ընդ որում՝ տարբեր հիմքերով արգելադրված միևնույն արժեթղթերը համարվում են արգելադրված միայն մեկ անգամ: Ընդ որում՝ «քանակը» ենթասյունակը չի լրացվում ծավալային արժեթղթերի դեպքում:»,

22) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 79.1-րդ կետով.

«79.1. Այն դեպքում, երբ հաշվի տեսակը, հաշվետիրոջ իրավաբանական կարգավիճակը, հաշվետիրոջ ռեզիդենտությունը, արժեթղթի դասը, արժեթղթի ծածկագիրը, թողարկողի ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը միաժամանակ համընկնում են, ապա Թիվ 10 հաշվետվությունը լրացնելիս տեղեկությունները լրացվում են ամփոփ՝ մեկ տողով:»,

23) Կանոնակարգի 82-րդ կետի 2-րդ ենթակետում «իրականացված գործառնություններ:» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Սույն սյունակը կարգավորվող շուկայում կնքված գործարքների դեպքում չի լրացվում:»,

24) Կանոնակարգի գլուխ 17-ը ուժը կորցրած ճանաչել,

25) Կանոնակարգի 127-րդ կետում «հաշվետու շաբաթվա» բառերից հետո լրացնել «հաշվետու ամսվա» բառերը,

26) Կանոնակարգի 128-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«128. Թիվ 18 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) ***«Հաշվի տեսակը»*** սյունակում լրացվում է «սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվ» կամ «անվանատիրոջ հաշիվ»: Այն դեպքում, երբ միևնույն հաշվի սեփականատեր են համարվում մեկից ավելի սեփականատերեր, նշվում է «սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվ»:

2) ***«Հաշվետիրոջ իրավաբանական կարգավիճակը»*** սյունակում լրացվում է «իրավաբանական անձ» կամ «ֆիզիկական անձ»:

3) ***«Հաշվետիրոջ ռեզիդենտությունը»*** սյունակում լրացվում է «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ»՝ կախված նրանից, թե արժեթղթերի հաշվի սեփականատերը կամ անվանատերը ռեզիդենտ է, թե ոչ ռեզիդենտ:

4) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, դրա բացակայության դեպքում նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):

5) ***«Թողարկողի անվանումը, գտնվելու վայրը»*** սյունակում նշվում է թողարկողի անվանումը գտնվելու վայրը՝ թողարկման պետական գրանցման համարի (արժեթղթի տարբերակիչ ծածկագրի) բացակայության դեպքում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրն առկա է, թե ոչ:

6) ***«Ծավալը»*** սյունակում լրացվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից պահառության վերցված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը, այդ թվում՝ գրավադրված և արգելադրված արժեթղթերի անվանական արժեքը: Պահառության վերցված արժեթղթերի անվանական արժեքի վերաբերյալ տեղեկությունների բացակայության դեպքում սույն ենթասյունակը չի լրացվում:

7) ***«Գրավադրված արժեթղթերի ծավալը»*** սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներում առկա գրավադրված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը (ըստ յուրաքանչյուր արժեթղթի ծածկագրի): Ընդ որում՝ տարբեր հիմքերով գրավադրված միևնույն արժեթղթերը համարվում են գրավադրված միայն մեկ անգամ:

8) ***«Արգելադրված արժեթղթերի ծավալը»*** սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներում առկա այն արժեթղթերի ծավալը (ըստ յուրաքանչյուր արժեթղթի ծածկագրի), որոնցով գործառնությունների իրականացման վրա արգելք (սահմանափակում) է դրվել (բացառությամբ գրավադրման հիմքով արգելանքի): Ընդ որում՝ տարբեր հիմքերով արգելադրված միևնույն արժեթղթերը համարվում են արգելադրված միայն մեկ անգամ:»,

27) Կանոնակարգում լրացնել հետևյալ բովանդակությամբ 129-րդ կետ.

«129. Այն դեպքում, երբ հաշվի տեսակը, հաշվետիրոջ իրավաբանական կարգավիճակը, հաշվետիրոջ ռեզիդենտությունը, արժեթղթի ծածկագիրը, թողարկողի ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը

միաժամանակ համընկնում են, ապա Թիվ 18 հաշվետվությունը լրացնելիս տեղեկությունները լրացվում են ամփոփ՝ մեկ տողով:»,

28) Կանոնակարգի Հավելված 6-ի.

ա. 1-ին և 2-րդ աղյուսակներում «Գործարքի կնքման ամսաթիվը» սյունակից հետո լրացնել նոր սյունակ՝ «Գործարքի կատարման ամսաթիվը» վերնագրով,

բ. 1-ին, 6-րդ, 7-րդ և 11-րդ աղյուսակներում «Արժեթղթի տարեկան եկամտաբերությունը» բառերը փոխարինել «Արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը» բառերով,

գ. 16-րդ աղյուսակում «Գործարքի կնքման (վերակնքման) ամսաթիվը» սյունակից հետո լրացնել նոր սյունակ՝ «Գործարքի կատարման (փակման) ամսաթիվը» վերնագրով,

դ. 17-րդ աղյուսակում «Ում անունից է գործարքը կնքվել» սյունակից հետո լրացնել նոր սյուներ՝ «Արժեթղթի դասը», «Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը» և «Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը» վերնագրերով, իսկ «Գործարքի կնքման ամսաթիվը» սյունակից հետո լրացնել նոր սյունակ՝ «Գործարքի փակման ամսաթիվը» վերնագրով,

29) Կանոնակարգի Հավելված 10-ը և Հավելված 18-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի և Հավելված 2-ի:

30) Կանոնակարգի Հավելված 17-ն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
7 մայիսի 2015 թ., N 114-Ն

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի մայիսի 5-ի թիվ 114-Ն որոշմամբ

Հավելված 10

«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՑՎԱԾ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ամսական)

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը _____

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվը _____

(ՀՀ դրամ)

N	Արգելադրված արժեթղթեր		Գրավադրված արժեթղթեր								
	Ծավալը	Ընդհանուր թվաքանակը	Ծավալը	Ընդհանուր թվաքանակը	Թողարկողի ֆինանսական վիճակի գնահատականը	Արտարժույթի փոխարժեքը տոկոսներով	Արժեթղթի տեսակը	Հաշվեգրված եկամտի չափը տոկոսներով	Արժեթղթի թողարկողը	Արժեթղթի տեսակը	Արժեթղթի թողարկման ծավալը
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											
12											
13											
14											

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի մայիսի 5-ի թիվ 114-Ն որոշմամբ

Հավելված 18

«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 18

ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՑՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(շաբաթական, ամսական)

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը _____

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվը _____

N	Հաշվի տեսակը	Հաշվետիրոջ իրավաբանական կարգավիճակը	Հաշվետիրոջ ռեզիդենտությունը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը	Ծավալը	Գնահատման արժեթղթի միավոր	Կնքված գործարքների միավոր
1								
2								
…								

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՄԱՅԻՍ 2015)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 60

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 63

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Դրամական փոխանցումների ներհոսքն ըստ վճարային հաշվեկշռի

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

ՀՀ միջազգային ներդրումային դիրք (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

ՀՀ համախառն արտաքին պարտք (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 78

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 79

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 89

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Միջբանկային բորսայական վարկերի տոկոսադրույք

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 109
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 120
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 122
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
